



Պրիւքսեւի մէջ Հայաստան-Եւրոմիութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը ստորագրուեցաւ



Նոյեմբեր 24-ին, Պրիւքսեւի մէջ ստորագրուեցաւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը:

Հայաստանի կողմէ զայն ստորագրեց ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալպանտեան, Եւրոմիութեան կողմէ՝ ԵՄ արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆետերիքա Մոկերինի: Ստորագրման արարողութեան ներկայ էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան եւ Եւ Նախագահ Տընդլտ Դուք:

Համաձայնագրի ստորագրութեան արարողութենէն ետք Մոկերինի եւ Նալպանտեան հանդէս եկան ելոյթներով:

«Անիկա բոլորիս համատեղ յաջողութիւնն է եւ կրնայ դրական նախադէպ դառնալ համագործակցային այլ ծրագիրներու համար», - նախապէս ունեցած իր ելոյթին ընթացքին ըսած էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան:

ՀՀ նախագահը նաեւ նշած էր, որ 2017 թուականը իրաւամբ կարելի է համարել Հայաստան-ԵՄ յարաբերութիւններու քառորդ դարեայ պատմութեան կարեւոր հանգրուաններէն մէկը, որ նշանաւոր կը դառնայ այսօր՝ այս զագաթնաժողովին ծիրէն ներս, ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի ստորագրումով:

«Անիկա համընդգրկուն փաստաթուղթ է, կ'արտացոլացնէ մեր երկկողմ փոխգործակցութեան վերջին շրջանի նշանակալի զարգացումները եւ կը սահմանէ անոնց խորացման համար անհրաժեշտ ուղենիշները:

29 տարի անց



Դեկտեմբեր 7-ին, հայուքիւնը աշխարհով մէկ կը յիշէ Սպիտակի աներիչ երկրաշարժի զոհերը: 29 տարի առաջ այս օրը՝ ժամը 11:41-ին, Հայաստանը մօտ 35-45 վայրկեան ցնցուեցաւ 10 բալ յոժգնութեամբ: Երկրաշարժի հետեւանքով աներուածութիւններ տեղի ունեցան Հայաստանի 21 քաղաքներու եւ 324 գիւղերու մէջ: Հիմնահատակ աներուեցան Սպիտակ քաղաքը ու յարակից գիւղերը, քանդուեցան Հայաստանի երկրորդ քաղաքի՝ Գիւմրիի (Լենինական) շինութիւններու 80 տոկոսը, մեծ վնասներ կրեցին Վանաձորը ինչպէս նաեւ Շիրակի, Լոռիի, Արագածոտնի ու Տավուշի մարզերը: Երկրաշարժը աներեց երկրի տարածքի 40 տոկոսը: Պաշտօնական տուեալներով, մահացան 25.000 անձ, 100.000 անձ ստացան մարմնական տարբեր աստիճանի վնասուածքներ, 19.000 անձ դարձաւ հաշմանդամ, մօտ 530.000 անձ դարձաւ անօթեւան: Աղէտի գօտիէն տարհանուեցան 120.000 անձ, որոնցմէ 75.000-ը՝ Հայաստանէն դուրս: Հայաստանին օգնութիւն ցուցաբերեց ամբողջ Խորհրդային Միութիւնը ու աշխարհը:

29 տարի անց երկրաշարժի հետքեւանքները դեռ ամբողջովին վերացուած չեն, դեռ կան անօթեւան ընտանիքներ:

Այս համաձայնագիրը սոսկ չորս իրաւական փաստաթուղթ մը չէ, այլ մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու վրայ խարսխուած այն արժեքահամակարգի արտացոլումն է, որ մենք կը դաւանենք: Համաձայնագիրին հիմքը ժողովրդավարութեան արմատաւորման այնպիսի կարեւոր դրոյթներ են, ինչպէս՝ իրաւունքի գերակայութիւնը, արդարադատութեան ամրապնդումը, պետական եւ հասարակական հիմնարկներու զարգացումը, լաւ կառավարումը: Այս դրոյթները կեանքի կոչելը կենսական կարեւորութիւն ունի մեր երկրին մէջ յետագայ բարեփոխումները յաջողութեամբ իրականացնելու տեսանկիւնէ», - ըսած է ան:



Հաղորդագրութիւն «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»-ը օժտուեցաւ հիմնադրամով

Սոյն հաղորդագրութեամբ, ուրախ ենք հայ ժողովուրդի զաւակներուն տեղեկացնելու, որ «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» առջանց լրատուական կայքը հայ իրականութեան մէջ իր 12-ամեայ գոյութիւնը թագադրեց Հայրենիքի մէջ գրանցուելով, որպէս ՀԻՄՆԱԴՐԱՄ:

Արդարեւ այս առիթով, Հայաստանի Արդարադատութեան Նախարարութեան եւ առնչուած պետական պատկան մարմիններուն մօտ գրանցուեցաւ «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» Հիմնադրամը:

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» Հիմնադրամի գործունեութեան ՆՊԱՏԱԿՆ Է՝

ա) Լրատուութեան արտադրում, հաւաքագրում, մշակում, հեռարձակում եւ հրապարակում համացանցի (www.ragmamoul.net եւ/կամ այլ կայքերու միջոցով) եւ զանգուածային լրատուութեան այլ միջոցներով՝ տարբեր լեզուներով:

բ) Տարածել՝

- Հայ հեղինակներու, ազգութեամբ հայերու եւ ոչ հայերու յօդուածներն ու աշխատասիրութիւնները,
- Հայաստանի եւ Սփիւռքի մէջ կազմակերպուող ձեռնարկներուն մասին տեղեկատուութիւն,
- Զաղաքական, ընկերային, մշակութային, տնտեսական, մարզական եւ այլ իրադարձութիւններու լրատուութիւն,
- Չեղոյցներու եւ այլ նիւթերու հրապարակում համացանցի եւ զանգուածային լրատուութեան այլ միջոցներով տարբեր լեզուներով:

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» Հիմնադրամի գործունեութեան ԱՌԱՐԿԱՆ Է՝

ա) Լրատուական գործունեութեան ուղղուած ծառայութիւններու տրամադրում շահագրգիռ յաճախորդներու ու բաժանորդներու:

բ) Լրատուական ոլորտին մէջ աշխատող տեղական եւ օտարերկրեայ կազմակերպութիւններու ու հնարաւոր գործընկերներու միջեւ գործարար կապերու ստեղծում:

գ) Լրատուական ոլորտին մէջ մասնագիտական խորհրդատուութեան տրամադրում:

դ) Շահագրգիռ բոլոր անձերու համար դասընթացներու, ցուցահանդէսներու եւ սեմինարներու կազմակերպում:

ե) Լրատուութեան ոլորտին մէջ կարգաւորող օրէնսդրական դաշտի ուսումնասիրում, ինչպէս Հայաստանի Հանրապետութեան մէջ, այնպէս նաեւ արտասահմանի եւ այդ ոլորտի զարգացման վերաբերեալ առաջարկութիւններու ներկայացում:

զ) Լրատուութեան ոլորտին մէջ այլ գործունեութեանց իրականացում: Վերոյիշեալներու լաւագոյնս կառավարման համար «ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» Հիմնադրամը հիմնուելով իր կանոնադրութիւնը թիւ 6 յօդուածին վրայ արդէն իսկ օժտուած է Հոգաբարձուներու Խորհուրդով մը (Board of Trustees), որուն կազմը կ'ընդգրկէ լրագրութեան եւ հրապարակագրութեան ինչպէս նաեւ ազգային կեանքի մէջ մեծ ներդրում ունեցող անձնաւորութիւններով:

Հայ իրականութեան մէջ իր արժանի եւ օգտաշատ տեղը ունենալու վճռակամութեամբ, Հիմնադրամը արդէն իսկ սկսած է իր աշխատանքներուն, կեդրոնատեղի ունենալով Երեւան քաղաքի Կեդրոն համայնքի, Արշակունեաց պողոտայի, թիւ 2 հասցէի հիմնական մասնաշէնքի, 2-րդ յարկի թիւ 212 գրասենեակը:

Հեռաձայն՝ +374 99 996 573 եւ +961 3 824 833

Ե-նամակի հասցէ՝ office.ragmamoul@gmail.com

Կայք՝ www.ragmamoul.net

ՃԵՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» հիմնադրամի տնօրէն

News in



Pages 15-22

“Հայ Կեանք”

Ելեկտրոնային
Պարբերական

Հրատարակման
Պատասխանատուներ
Տիգրան Ապասեան
Խաչատուր Ադամեան
Դոկտ. Համբիկ-Սահակ Մարուքեան
Աթէնք - Յունաստան

“Χάι Γκιάνκ”

Ηλεκτρονική Περιοδική
Ενημερωτική Έκδοση

Υπεύθυνοι Έκδοσης
Δικράν Αρµασιάν
Χατσαδούρ Αταμιάν
Δρ. Χαμπίκ-Σαχάκ Μαρουκιάν

Αποστέλλεται
ηλεκτρονικώς & ατελώς

“Hye Gyank”

Electronic
Periodical Publication

Athens - Greece

E-mail: hyegyank@gmail.com

Հաւատարմով ազատ խօսքի իրաւունքին եւ բազմակարծութեան՝ կ'ընդունինք, որ հրապարակուած գործիւնները անպայման չարտայայտեն հրատարակիչներու տեսակէտը: Հրատարակիչներուն կը վերապահուի յղուած յօդուածները յապաւելլու կամ չհրատարակելու իրաւասութիւնը:

Էմանուել Մաքրոն Հայաստան պիտի այցելէ



Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոն պիտի այցելէ Հայաստան: ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար Սուրեն Կարայեանի հետ հանդիպման ժամանակ՝ Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպան Ժոնաթան Լաքրո Նշած է, որ հայ ֆրանսական յարաբերութիւններու, ինչպէս՝ տնտեսական համագործակցութեան խթանման համար, Էական նշանակութիւն ունին ստորագրուած Հայաստան-Եւրոմիութիւն Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը եւ Հայաստանի կողմէ ֆրանսախօս երկիրներու նախարարներու խորհուրդի նախագահութեան ստանձնումը: Դեսպանը այս ծիրէն ներս կարելոր համարած է նաեւ Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնի սպասուող այցը Հայաստան:

Նախարարութեան հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ, Ժոնաթան Լաքրոյ խօսքով՝ Հայաստանի մէջ ներկայացուած ֆրանսական գործարարութիւնը ընդլայնուելու մտադրութիւն ունի: Դեսպանը աւելցուցած է, որ արդէն իսկ հասցուցած է հանդիպիլ որոշ ներդրողներու հետ, եւ կրնայ փաստել, որ ֆրանսացիները կը ցանկան ներդրում կատարել Հայաստանի մէջ՝ հաշուի առնելով նաեւ Հայաստանի արտահանման հնարաւորութիւնները դէպի եւրոպական, եւրասիական եւ իրանական շուկաներ:

«Մենք պատրաստ ենք ըլլալ Հայաստանի մէջ գործող ֆրանսական գործարարութեան կողքին, աջակցիլ անոր եւ բոլոր ջանքերը ուղղել այնպիսի միջավայրի եւ պայմաններու ապահովման, որոնք անհրաժեշտ են ֆրանսացի գործարարներուն Հայաստանի մէջ գործունէութիւն իրականացնելու համար», – նշած է նախարար Կարայեան:



ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԲ ՊԱՏՐԻԱՐԹԱՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ



ՊՈԼԻՍ.- Երեքշաբթի, 21 Նոյեմբերի յետմիջօրէին, Պոլսոյ պատրիարքարանին մէջ գումարուեցաւ Եկեղեցական համագումար ժողով: Տեղապահ Գարեգին արք. Պեքճեանի նախագահութեամբ՝ Գումգարուի մէջ համախմբուեցան պատրիարքական աթոռի ենթակայ իոզելոր հայրերը: Մօտաւոր անցեալին, Կրօնական ժողովի Նիստին ընթացքին որոշուած էր կազմակերպել Եկեղեցական համագումարի Նիստ: Անոր նպատակն էր համարել Կրօնական ժողովի կազմէն պակասած անդամները:


Համագումարի սկիզբը տեղապահ սրբազան հայրը հանդէս եկաւ բացման խօսքով: Կրօնական ժողովի ատենապետ Սահակ եպս. Մաշալեան անդրադարձաւ համագումարի նպատակին: Նորին սրբազնութիւնը մատնանշեց, որ Միւռնոն Ա. քիւյ. Այվազեան ներկայիս անկողինին կը ծառայէ, իսկ Եղիա Ա. քիւյ. Զերվանճեան հաստատուած է արտասահման: Հետեւաբար, անհրաժեշտութիւն յառաջացած է Կրօնական ժողովին շարքերը լրացնել:

Բաց քուէարկութեամբ կազմուեցաւ ժողովի դիւանը: Եղիշէ վրդ. Ուլքունեան ընտրուեցաւ ատենապետ, իսկ Տրդատ քիւյ. Ուզունեան՝ ատենադպիր: Չաքոն Ճ. վրդ. Օհանեան եւ Թաթուլ Ճ. վրդ. Անուշեան եղան քուէարկուեցան: Փակ քուէարկութեան արդիւնքով՝ Կրօնական ժողովի անդամ ընտրուեցան Չատիկ վրդ. Պապիկեան եւ Կորին Ա. քիւյ. Ֆեներճեան: Արդիւնքի հրապարակումէն ետք, նորընտիր տէր հայրը հանդէս եկաւ սրտի խօսքով մը:

Համագումարը աւարտին հասաւ տեղապահ սրբազան իոր աղօթքով:

«ԺԱՄԱՆԱԿ»

ԼՂ հիմնախնդիրը կարգաւորել միջազգային իրաւունքի սկզբունքներով, ՄԱԿ-ի կանոնադրութեան դրոյթներով հիման վրայ. ՀԱՊԿ



Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան անդամ պետութիւններու (ՀԱՊԿ) ղեկավարները հանդէս եկած են համատեղ յայտարարութեամբ, ուր իրենց աջակցութիւնը յայտնած են ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու՝ Լեւոնայի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ուղղուած ջանքերուն: Այս մասին կը տեղեկացնէ ՀԱՊԿ-ի պաշտօնական կայքը:

«ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահութիւնը՝ ի դէմս Ռուսիոյ Դաշնութեան, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու, միջազգային հանրութեան համապատասխան իրաւագիր ունեցող միակ կառոյցն է,

որուն առաքելութիւնն է աջակցութիւն ցուցաբերել քաղաքական-դիւանագիտական ուղիներով ԼՂ հակամարտութեան կարգաւորման», - նշուած է ՀԱՊԿ յայտարարութեան մէջ:

Նաեւ կ'ըսուի, որ ՀԱՊԿ անդամ պետութիւնները աջակցութիւն կը ցուցաբերեն ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահող երկիրներու հակամարտութեան կարգաւորման ուղղուած ջանքերուն, մասնաւորապէս միջազգային իրաւունքի սկզբունքներով եւ չափանիշներով, ՄԱԿ-ի Կանոնադրութեան դրոյթներով, ինչպէս նաեւ Հելսինկեան Եզրափակիչ ակտի հիման վրայ, որոնք մասնաւորապէս կը վերաբերին ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքին:

«Կ'աջակցինք այն համաձայնութիւններու իրականացման, որոնք ձեռք բերուած են ԼՂ հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ 2016-2017 Վիեննայի, Ս. Փեթրոսպոլի եւ Ժընեւի մէջ գազաթնաժողովներու ծիրէն ներս եւ որոնք ուղղուած են թոյլ խուսափելու իրավիճակի սրացումէն, պահպանելու հրադադարը, հակամարտութեան գոտիին վրայ լարուածութիւնը տկարացնելու ուղղութեամբ յաւելեալ միջոցներու ձեռնարկելու եւ բանակցային գործընթացը անմիջականացնելու», - կը նշուի յայտարարութեան մէջ:

Նալպանտեան ստանձնած է Ֆրանսախօս երկիրներու Արտաքին գործոց նախարարներու համաժողովի նախագահութիւնը



26 Նոյեմբերին Փարիզի մէջ ընթացող Ֆրանսախօս երկիրներու նախարարներու համաժողովին Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան ստանձնած է 84 անդամ, ընկերակցած եւ դիտորդ պետութիւն ու կառավարութիւն միաւորող Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան արտաքին գործոց նախարար-

ներու համաժողովի նախագահութիւնը:

Ըստ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական կայքէջին, համաժողովի աւարտին տեղի ունեցած հանդիսաւոր արարողութեան Մատակասքարի արտաքին գործոց նախարար Անրի Ռապարինձական Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար Էտուարտ Նալպանտեանին փոխանցած է Ֆրանսախօս երկիրներու նախարարներու համաժողովի նախագահութիւնը:

«Այս պահին, երբ Հայաստանը ստանձնում է *Ֆրանսախօս երկրների* նախարարական համաժողովի նախագահութիւնը, հպարտութեան զգացում եմ ապրում Հայաստանի հանդէպ ցուցաբերուած այս պատուի համար: ՄԵԿ անգամ եւս ցանկանում եմ խորին երախտագիտութիւն յայտնել *Ֆրանսախօս երկրների* պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարներին *Ֆրանսախօս երկրների* XVII գագաթաժողովի անցկացումը մեր երկրին վստահելու համար», - ըսած է

Շարունակութիւնը էջ 6

Հայաստան - Յունաստան դիւանագիտական կապերու 25-ամեակին նուիրուած յիշարժան ձեռնարկ



ու աշխատանքները աշխարհագրական շրջանի մը՝ որ տասնամեակներ ծանօթ է հոն տիրող բազմատեսակ խնդիրներուն համար:

Առաջին բանախօսը՝ պատուոյ դեսպան Էմանուիլ Մեդալոքոնոմոսն էր, որ մշակեց «Բացում Յունաստանի եւ Հայաստանի դիւանագիտական կապերու» նիւթը: Բանախօսը՝ 1991-ին ստանձնած էր պրպտելու, ուսումնասիրելու եւ ձեւաւորելու այդ ուղղութեամբ ի գործ դնող բոլոր հնարաւորութիւններուն, կարելիութիւններուն եւ դրութիւններուն կարգաւորման պարտականութիւնը: Ան կանգ առաւ դիմագրաւած այն բոլոր խրդին ու բազմաթիւ խնդիրներուն առնչութեամբ որոնց գոյութիւնը՝ բնականաբար

արդիւնք էր այդ ժամանակաշրջանի խորհրդային Միութեան երկիրներու միջեւ տիրող գոյալիճակին: Ի վերջոյ անդրադարձաւ ՀՀ ԱԳՆ առաջին նախարար Ռաֆֆի Յովհաննէսեանի հետ իր ունեցած սերտ համագործակցութեան եւ արդիւնաւետ խօսակցութիւններուն մասին, որոնք օժտեցան եւ յանգեցան երկողմ իրերայաջորդ յաջող համաձայնութիւններով ու կ'ընդգրկէին բարեկամ երկու երկիրներու միջեւ նորաստեղծ դիւանագիտական հատուածին լիակատար ստեղծումը:

Յաջորդ բանախօս՝ նոյնպէս պատուոյ դեսպան՝ Լեոնիտաս Խրիսանթոփուլոս, զբաղեցաւ «Յուշեր եւ փորձառութիւններ ՀՀ մէջ առաջին Յունաստանի դեսպանի կողմէ» նիւթով: Նախ ան յայտնեց թէ, համաձայն իր ինքնական առաջարկին եւ փափաքին նշանակուած էր որպէս ՀՀ մէջ Յունաստանի առաջին դեսպանը: Ինքը եւս կրեց այն շրջանի երկրին մէջ տիրող բիւր դժուարութիւնները, որոնք արդիւնք էին ընդհանրապէս Թուրքիոյ կողմէ յարուցած խոչընդոտութիւններուն: Խօսեցաւ նաեւ հայկական դրամանիշի որդեգրման աշխատանքներուն մասին, այսինքն 1 դրամ=200 ռուպլի հաւասարութեամբ: Լայնօրէն անդրադարձաւ այդ նախնական տարիներուն՝ Յունաստանի կատարած նեցուկին եւ առատաձեռն օգնութեան մասին, ինչպէս՝ ռազմական, մարդասիրական, տնտեսական եւ այլ մարզերու կապակցութեամբ: Վերջաւորութեան, ան դիրքորոշուեցաւ Արցախի պատերազմին շուրջ նշելով՝ թէ Արցախը անկասկածելիօրէն հայկական տարածք է եւ հիմնահարցին լուծումը յաջողելու է միայն խաղաղ միջոցներով: Ներկաներուն ուշադրութեան արժանացաւ յարգելի եւ փորձառու բանախօսին այն տեսակետը, թէ եթէ երբեք յաջողէր 1993-ի հասարակարկի պատրաստած պետական հարուածը ՌՀ նախագահ Ելցինի դէմ, զինք առաջին ճանաչողը եւ ընդունողը բնականաբար պիտի ըլլար Թուրքիան, որու յաջորդ քայլը պիտի ըլլար

Ընթացիկ տարուայ՝ ինչպէս նաեւ յառաջիկայ տարուայ ըլլալիք զանազան ամեակներու շարքին, Չորեքշաբթի, Նոյեմբեր 22-ի երեկոյան Կ.Պոլսեցիներու Մշակութային կեդրոնի (Աթէնք) շքեղ հանդիսարանին մէջ, պատշաճօրէն տեղի ունեցաւ՝ կազմակերպութեամբ Հայ-Յունական բարեկամութեան Միութեան, բարեկամ երկու երկիրներու (Յունաստան, Հայաստան) միջեւ քաղաքադիւանական պաշտօնապէս եւ ամբողջովին հաստատման 25-ամեակը: Նախ տեղին է նշել, թէ նշեալ Միութեան ըլլալ վարչական կազմը կամ անդամակցութեան մեծամասնութիւնը՝ կը բաղկանայ հայ-յունական բարեկամութիւնը ջատագովող եւ յետապնդող գիտակից ու զարգացումով օժտուած երիտասարդներ:

Օրուայ բանախօսները՝ ուշադրութեամբ զտուած երեւելի ու յայտնի երեք անձնաւորութիւններ էին, հրաւիրուած՝ իրենց մարզին ու պաշտօնին վերաբերող նիւթեր մշակելու եւ ներկայացնելու հետաքրքիր ներկաներուն: Ինչպէս. --

ա) Պատուոյ դեսպան՝ Էմանուիլ Մեդալոքոնոմոս, «**Յունաստանի եւ Հայաստանի դիւանագիտական կապերու հաստատման սկզբնաւորութիւն**»՝ նիւթը:

բ) Պատուոյ դեսպան՝ Լեոնիտաս Խրիսանթոփուլոս, «**Յուշեր եւ փորձառութիւններ առաջին Յունաստանի դեսպան Հայաստանի մէջ**»՝ նիւթը:

գ) Ձեռնարկը կազմակերպող Միութեան ատենապետ, ռազմավարական փորձագետ-խորհրդատու եւ հրապարակախօս՝ Նիքոս Լիդերոս, «**Հայկականութեան եւ Հելլենիզմի կապերը**»՝ նիւթը:

Կ.Պոլսեցիներու Միութեան ատենապետ Նիքոս Ուզունօղլուի հակիրճ բացման խօսքէն վերջ, ձեռնարկը վարելու պարտականութիւնը ստանձնեց Միութեան ատենադպիր Անտոնիս Փալիտիս: Երկուքն ալ հանդէս եկան դրուատելով Հայաստանի եւ Արցախի կիրարկած հաւասարակշռութիւնները հաստատ ու խաղաղ պահելու կեցուածքը, ջանքերը

Հայոց ցեղասպանության մասին «խոստումը» ֆիլմի բեմադրիչը պատմած է՝ ինչո՞ւ ֆիլմը այդպես անուանած է

Հայոց ցեղասպանության մասին պատմող հոլիվուդյան «խոստումը» ֆիլմի բեմադրիչ Թերի Ճորձ Ֆրանսական **«Nouvelles d'Arménie»** պարբերականին տուած հարցազրույցի ժամանակ պատմած է, թե ինչո՞ւ «խոստում» անուանած է ֆիլմը:

Ան նշած է, որ ֆիլմի վերնագրին տակ կայ միաժամանակ երեք «խոստում»:

«Առաջին խոստումը ամենապարզն է՝ խոստումն է, որ Միքայելը տուա Մարային: Երկրորդը՝ Զրոք Զրքորեանի ինքն իրեն տուած խոստումը ֆիլմ նկարահանելու մասին: Եւ երրորդը՝ հայերու ապրելու խոստումն է», – ըսած է Ճորձ:

Ան նաեւ նշած է, որ ֆիլմի նկարահանման համար զինք ոգեշնչած է հայ ժողովուրդի փրկուելու ու գոյատեւման փաստը, ինչպէս նաեւ այն, որ հայերը ցանկացան պատմել այդ մասին ամբողջ աշխարհին:

Յիշեցնենք, որ **օսքարակիր** բեմադրիչ Թերի Ճորձի ֆիլմին անդրանիկ ցուցադրութիւնը տեղի ունեցած է այս տարուան Ապրիլին: Շարժանկարին գլխաւոր դերակատարներն են Զրիսթիլն Պէյլ, Օսքար Այզեք եւ Շառլոթ լը Պոն:



Հայաստան - Յունաստան դիւանագիտական կապերու 25-ամեակին նուիրուած յիշարժան ձեռնարկ

Շարունակութիւն էջ 5-էն

անշուշտ յարձակիլ Հայաստանի վրայ:

Երրորդ բանախօսը՝ կովկասեան ռազմագիտական ոլորտի խորհրդատու եւ դասախօս Նիքոս Լիդերոս, ընտրած էր խօսելու «Հայկականության եւ հելլենիզմի հասարակ կապը» սիւթին մասին: Բանախօսը՝ ներկաներուն փոխանձեց իր գաղած տպաւորութիւնները եւ փորձառութիւնները Հայաստան եւ Արցախ 2007-ի, 2008-ի եւ 2012-ի կատարած այցելութիւններէն: Շեշտեց թէ, Արցախը Հայաստանի անկախացման բնական շարունակութիւնն է: Յաջորդաբար, ոյժգնօրէն անդրադաձաւ թէ հայերու եւ յոյներու կապերը եղած են միշտ զօրաւոր եւ այդ, որովհետեւ երկու ժողովուրդները ունին հասարակ բազում կետեր: Բանախօսութեան իր բաժինը ամբողջացնելէ առաջ՝ ըսաւ թէ երկու պետութիւններու միջեւ բարեկամական համաձայնագրեր ստորագրելու անհրաժեշտութիւն չէ եղած երբեք, քանի այդ ինքնին տուեալ մըն է: Խօսքը վերջացուց ըսելով թէ երկու ազգութիւնները թշնամի չեն եղած երբեք:

Բանախօսութիւններու եւ պարունակութեամբ հարուստ ձեռնարկը՝ իրենց ներկայութեամբ պատուեցին Յունաստանի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Տիար Ֆատէյ Չարչօլլեան, Յունաստանի ԱԳ Նախարարութեան Կովկասեան հարցերու պատասխանատու՝ Կոստանթինոս Զաքիուսիս, Նոյն Նախարարութենէն բարձրաստիճան այլ պաշտօնատարներ, պոնտական եւ ասորական տեղական միութիւններու ատենապետներ եւ ներկայացուցիչներ, հայ եւ յոյն մամուլի ներկայացուցիչներ, «Հայ Կեանք» ե-պարբերականի պատասխանատուներ, Պէյրութի «Ծաղիկ» գրական ազգային շաբաթաթերթի խմբագրապետ՝ Յակոբ Տիւնեայեան, որ աշխատանքային այցով Աթէնք կը գտնուէր, հայ եւ յոյն բազմաթիւ ներկաներ:

Պատկառելի եւ ազգային առումով շահաւետ սոյն ձեռնարկը հասաւ իր աւարտի ու վստահաբար ներկաները մեկնեցան սրահէն տոգարուած ու լեցուն ներքին գոհունակութեամբ:

Խ.Հ.Ա.

Նալպանտեան ստանձնած է ֆրանսախօս երկիրներու Արտաքին Գործոց Նախարարներու համաժողովի Նախագահութիւնը

Շարունակութիւն էջ 4-էն

Նալպանտեան, շարունակելով. – «Մենք գիտակցում ենք, թէ ինչպիսի վիթխարի աշխատանք է մեզ սպասում: Առաջին հերթին, հարկաւոր է ապահովել Գազաթաժողովի յաջողութիւնը՝ կազմակերպչական առումով: Այս ուղղութեամբ ակնկալում ենք սերտօրէն համագործակցել Մատակասքարի Նախագա-

հութեան, Ձեզ հետ, տիկին Գլխաւոր քարտուղար, ինչպէս նաեւ **Ֆրանքոֆոնիայի** անդամ պետութիւնների եւ կառավարութիւնների հետ»:

Հայաստանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը շնորհակալութիւն յայտնած է Մատակասքարի իր գործընկերոջ՝ Նշելով, որ այսուհետ Հայաստանին եւ Մատակասքարին կը միացնեն ինչպէս պատմական, այնպէս ալ խորհրդանշական կապեր:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Բոլոր ժողովուրդներու պատմութեան մէջ կան եական նշանակութիւն ունեցող իրադարձութիւններ, նուաճումներ: Անոնք անպակաս են նաեւ մեր պատմութեան մէջ, եւ երաշխաւորած են մեր երթը, ըրած են այնպէս՝ որ տեւենք մեր ինքնութեամբ, չըլլանք պատմութեան մէջ յիշուող անցեալի ժողովուրդ եւ երկիր: Անոնց մասին յաճախ կը խօսինք, Գիրերու Գիւտէն մինչեւ Հայաստանի անդրանիկ եւ ներկայ անկախ հանրապետութիւններու ամեակները, կարծեք կ'որ թուականները յաւելեալ իրաւունք կը բերեն կամ կ'առաջնորդեն յանձնառութեան:

Կայ քաղաքական եւ բարոյական մեծ նշանակութիւն ունեցող իրականացում մը, որուն տեղական եւ զգացական վերաբերումները մասնակիի շապիկ պէտք է հազցնեն: Այդ իրականացման մասին պէտք է խօսիլ, յաճախ խօսիլ մեր ժողովուրդին, համոզելու եւ համոզուելու համար, որ պատմութեան օղակները չեն փակուած, հակառակ ուժի անարդարութեան վրայ հիմնուած միջազգային համաձայնութիւններու, որոգեգրուած օրէնքներու, նենգութիւններու, որոնց յաճախ կը պակսի բարոյականութեան եւ իրաւունքի կնիքը:

Այդ ազգային-քաղաքական մեծ իրականացումը մեր ժողովուրդին ձեռք բերած ԱՐՑԱԽԻ ազատագրական պայքարի յաջողութիւնն է, որուն մասին երբ կը խօսինք պէտք է արձանագրենք հիմնական նշանակութիւն ունեցող հետեւեալ հաստատումը. **ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԱՄԵԼԻ ԶԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԱՐԱՄԵԱԿԵ Ի ՎԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄՆ ԸԼԼԱՆՈՎ ՀՈՂ ԶԿՈՐՄԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՐՍՈՒՄԸՆ ԿԵՐՍՏԻՆ ԴԱՐՁՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ:**

Այս իրադարձութիւնը մամուլին նիւթ հայթայթող եւ համայնքներու հանրային կարծիքը զբաղեցնող զանազան ձեւերով ցեղասպանութեան ճանաչումներու բարոյական միախառնութիւններէն տարբեր որակ է:

Օրին, Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսը քաջաբար խօսած էր «Էնտիի հողեր»-ու մասին: Այդ հողերը այսօրուան ազատագրուած Արցախն են: Արամ Ա. կաթողիկոս, հակառակ վերապահութիւններու, աշխարհին յիշեցուց, որ «Էնտիի հողեր» կան սահմանին միւս կողմը, որ դատ ունինք:

Ֆրանսացիները, 1870-ի Գերմանիոյ դէմ պարտութենէ ետք, տեւաբար իրենց աչքերը յառած կը պահէին Վոժ լեռներու հեռուի կապոյտ գիծին, այդպէս ալ հայոց աչքերը յառած կը մնան, պէտք է որ մնան Արարատին եւ անկէ անդին տարածուող հայաշխարհին, մինչեւ կապուտակ Վանայ Ծովակ, մինչեւ հացառատ Մշոյ դաշտ, մինչեւ Սասուն... Կարելոր է մնալ պատնէշի վրայ եւ յոյսը պահել պատնէշի վրայ:

Ազատագրուած Արցախը քանդած է տեղատուութեան եւ պարտուողականութեան թապոլն: Ան

բռնագրաւուած Արեւմտահայաստանի ազատագրութեան օրինաչափ praxisն է: Այս ըմբռնումը տիրապետող կ'ըլլայ՝ Հայաստան եւ սփիւռք-(ներ), ոչ միայն որպէս թերթ մրոտելու եւ բարձրախօսներով սրահներ զուարճացնելու համար: Արցախ պատրաստ եղաւ պատմութեան հանգուցային պահուն, եղաւ յանձնառու: Հայաթափուած Հայաստանէն հայրենահանուած ազգը, անոր ժառանգները, զոր կը կոչենք սփիւռք-(ներ), որ յաւերժական պիտի չըլլայ համաշխարհայնացման հալոցին մէջ, melting pot-ին մէջ, ինչպէ՛ս պատրաստ պիտի ըլլան այն պահուն, երբ պատմութիւնը օղակ պիտի փոխէ եւ յանձնառութեամբ ներկայ պիտի ըսեն պատմութեան ձայնին, սոսկ հանդիսատես պիտի չըլլան:

Այնպէս է պատմութեան ընթացքը, որ բռնագրաւողը ուշ կամ կանուխ պիտի առերեսուի իր կողմէ անիրաւուած ժողովուրդներուն հետ: Այնպէս է պատմութեան ընթացքը, որ ժողովուրդները կ'ընթանան ինքնորոշման ուղիով, կը սրբագրուին բիրտ ուժի չարիքները, անոնք ըլլան զաղութարարական թէ այլ:

Այսօր, Հայաստան, Արցախ եւ սփիւռք-(ներ) միջազգային հրապարակի վրայ հեռանկարային որակով քաղաքական աշխատանք կրնան տանիլ, պէտք է տանին:

Ունինք այդ մարդկային, իմացական եւ տնտեսական ուժը:

Ի՞նչ կ'ըսէ ամէն օր գրուող պատմութիւնը եւ ինչպէ՛ս մենք պիտի գրենք մեր պատմութիւնը:

Զանի մը օր առաջ սերպ գորավար Ռադօ Մլատիչ Միջազգային Արդարադատութեան ատենակին կողմէ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցաւ, ցեղասպանական ոճիր գործած ըլլալու մեղադրանքով, ընդդէմ Սրբաբնիքայի հազարաւոր իսլամներուն: Դատավճիռը բաղկացած է 1008 էջերէ: Դատաւոր Ալֆոնս Օրիէ եզրակացուցած է, որ «ամբաստանեալին կողմէ գործուած ոճիրները կը դատուին մարդկութեան ծանօթ ամենէն ատելալաւներու շարքին»:

Պատմութիւնը կրնայ՝ մոռացման քար դնել մէկուկէս միլիոն քրիստոնեայ հայերու դէմ գործուած ցեղասպանական ոճիրին վրայ:

Ինչո՞ւ ատրպէյճանական նոյնատեսակ ոճիրները չհասան Միջազգային Արդարադատութեան Ատենան, ինչո՞ւ չկարողացանք հոն հասցնել:

Զանի ըսուած է որ այդ ոճիրները անժամանցելի են, ինչո՞ւ այդ ճիգը այսօր չընել:

Փաստերը բազմաթիւ են: Սամուէլ Շահմուրատեան թղթածրար կազմած էր: Վկայութիւններ հաւաքած էր: Այդ թղթածրարը այսօր կարծեք մոռցուած է հայ քաղաքական գործիչներուն կողմէ, բացակայ է բանակցողներու թղթապանակէն: Ինչո՞ւ չենք այժմեականացներ այդ տուեալները եւ չենք դնել

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ

Ճարուևակութիւն Էջ 7-Էն

բանակցութիւններու սեղանին վրայ: Ինչո՞ւ չենք տանիր Միջազգային Արդարադատութեան Ատենա: Այդ փաստերու մասին կը խօսի Նաեւ պելոռուս Սվետլանա Ալեքսիեւիչ, գրականութեան նոպելեան դափնեկիր: Անոր գիրքին մէջ արձանագրուած վկայութիւնները աւելի քան բաւարար են, անկախ մեր կողմէ հրապարակուածներէն, որոնց գումարով կրնանք դիմել Ռադօ Մլատիչը դատապարտած Միջազգային Արդարադատութեան Ատենա:

Սվետլանա Ալեքսիեւիչի գրականութեան մասին գրած եմ: Ինչ որ ըսած է, աւելի լայն տարածում կու տայ Արցախի մէջ ատրպէյճանցիներու կողմէ գործուած մարդկութեան դէմ ոճիրներուն, քան ներքին սպառնալիքի համար մեր սեւցուցած էջերը: Գրած էի.

Սվետլանա Ալեքսիեւիչի գիրքի քանի մը էջը համաշխարհային տարածում կու տայ ատրպէյճանական չարագործութեան, պետական եւ աւելի ցեղային-ծինային տարագում մը տալով ժողովուրդի մը ոճրամիտ վերաբերումին ուրիշ ժողովուրդի մը դէմ:

«Պաքուի մէջ կ'ապրէինք ուր յարկանի շէնքի մը մէջ: Առաւօտ մը, հայ ընտանիքները խմբեցին բակը... Անոնց շուրջ հաւաքուեցան մարդիկ, եւ բոլորը, մէկ առ մէկ, իրենց ձեռքին ինչ որ կար, անով հարուածեցին զանոնք: Հինգ տարեկան մանչուկ մը, զարկաւ իր ձեռքի պզտիկ բահով: Եւ ատրպէյճանցի պառաւ կին մը անոր գլուխը շոյեց...»

«...Մեր բարեկամները ատրպէյճանցի էին, Նաեւ անոնք, բայց մեզ թաքցուցին իրենց մառանը: Մեզ ծածկած էին խառնիխուռն ամեն բանով, խաւաքարտերով... Մեզի ուտելիք կը բերէին գիշերով...»

«Առաւօտուն երբ աշխատանքի կ'երթայի, դիակներ կային փողոցներուն մէջ, երկարած գետինը կամ Նստած պատի մը կռնած, կարծեք ողջ ըլլային: Ոմանք ծածկուած էին սաւանով մը, ուրիշներ ոչ: Ժամանակ չէին ունեցած այդ ընելու: Շատեր մերկացուած էին: Այրերը ինչպէս Նաեւ կ'իները... Անոնք որոնք Նստած էին, չէին մերկացուած, ժամանակ չէին ունեցած զանոնք շտկելու...»

«Առաջ կը խորհէի, որ տաճիկները մանուկի պէս էին, ոչ ոքի չարիք կրնային ընել: Վեց ամիս ետք, Նոյնիսկ աւելի շուտ, ոչ Տուշմաթէն կը ճանչնայինք ոչ ալ մարդիկը: Դիարանները կը յորդէին: Առաւօտուն, լերդացած եւ չորցած արեան դոնդողներ կային կուարի վրայ, հոն կը մնային մինչեւ որ կոխկրտուէին... Կարծեք սառած հիւթի դոնդող ըլլային...»

«Օրեր շարունակ մեր տան առջեւէն ցուցանակներով տողանցեցին. «Մահի Հայերուն»: Այրեր եւ կիներ: Ծերեր եւ երիտասարդներ: Սանձագերծուած ամբոխ մը, ոչ իսկ մէկ մարդակային դիմագիծ կար: Թերթերը լեցուն էին պզտիկ ծանուցումներով. «Կը փոխանակեմ երեքսենեականոց բնակարան մը

Պաքուի մէջ, որեւէ բանով ռուսական քաղաքի մը մէջ:» Մեր բնակարանը վաճառեցինք երեք հարիւր տոլարի: Սառնարանի մը գինը: Եթէ այդ գինով չծախէինք, կը սպանուէինք...»

«...Մենք մեր բնակարանի դրամով ինծի համար չինական տուտուն մը (վերարկու) մը գնեցինք եւ բուրդով մոյկեր ամուսինսի համար: Կահոյքը, գորգերը, ամանեղէնները... Ամեն բան ձգեցինք»:

«...Ոչ լոյս կար ոչ կազ... ոչ ջուր... Շուկան գիները բանդագուշանք էին: Մեր տան մօտ կրպակ մը բացուեցաւ: Հոն կը ծախէին միայն մեռելներու համար ծաղիկներ եւ ծաղկեպսակներ...»

«...Գիշերուան ընթացքին, դրացի շէնքի մը պատին վրայ գրած էին. «Դողացէ՛ք, աղբ Ռուսեր»: Զրահապատներու ձեր գիւնուրները ոչինչ կրնան ընել ձեզի համար»: Ռուսերը, որոնք պատասխանատու պաշտօններ ունէին, գործէ արձակուած էին: Փողոցներու ամեն անկիւնի վրայ կը կրակէին... Շատ արագ քաղաքը Նոյնքան կեղտոտ դարձաւ որքան քիշլաք մը (կովկասեան գիւղ մը): Այս այլեւս օտար քաղաք մըն էր: Խորհրդային քաղաք մը չէր...»:

Ծաւալուն հատոր կարելի է կազմել ատրպէյճանական ցեղասպանական-ոճրային վերաբերումներու մասին, Նոյնիսկ Արցախի ազատագրական շարժումէն առաջ: Պետք է յիշել եւ յիշեցնել, որ ուսուցիչը իր հայ աշակերտը մորթած էր եւ բացատրած, որ ինք չարագործ չէր, հայ կը մորթէր: Պետք է յիշել, Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան երկորդ քարտուղար Պոլեանէշքոն, որ կը սպառնար գնացքներով երկրէն դուրս դնել հայերը, ատրպէյճանցի գիւնուրը հայ սպայ սպաննած էր, երբ երկուքն ալ կը գտնուէին Հունգարիա Նոյն աշխատանքային ծրագրին մասնակցելու համար, ոճրագործը կրցած էր Ատրպէյճան վերադառնալ եւ որպէս հերոս ընդունուիլ, փաստելով, որ հայութեան դէմ ոճրային վերաբերումը պետական բնոյթ ունէր, այսինքն պետութիւնը մեղսակից էր: Դեռ կարելի է յիշել Սումկայիթի ոճիրները, հայ վարորդներու սպանութիւնները:

Նաեւ այսօր, հակառակ հաստատուած գիւնդադարին, դիպուկահարներ, միջազգային դատերու աչքին առջեւ, հայ գիւնուր կը սպաննեն:

Մինսքի խումբի համանախագահներուն պետք է տրուի այս ամբողջական թղթածրարը, եթէ արդէն չեն գիտեր: Այն ատեն ո՞վ եւ ինչպէ՞ս ինքնիրեն թոյլ կրնայ տալ ըսելու, որ Արցախ պետք է վերադառնայ «Ատրպէյճանի կազմի մէջ»...:

Ատրպէյճան պետութիւնը պետք է ներկայանայ Միջազգային Արդարադատութեան Ատենա, ինչպէս Ռադօ Մլատիչը: Հաւանօրէն դատավճիռը 1008 էջ չ'ըլլար, այլ քան մը անգամ 1008 ... Արցախի հարցի քաղաքական լուծումը կրնայ անցնիլ նման վճիռէ մը, եւ ոչ թուրիզմի վերածուած շատախօսական երթեւեկէ...:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ

Շարունակություն էջ 8-էն

Այս կրակի բովեն անցած ազատագրուած Արցախի պետութեան երեսնամեակն է: Նոր ժամանակներու հայու ինքնութեան եւ հպարտութեան վերականգնումի պատուանդանը: Ապագայի տեսլականներու եւ նախաձեռնութիւններու հիմքին պէտք է միշտ առաջնորդուիլ Արցախով եկած քաղաքական հիմնական գաղափարով, որ երկու հազարամեակ տեւաբար հող կորսնցնելէ ետք **ԱՉԳԸ ՀՈՂ ԱՉԱՍԱԳՐԵՑ**: Այս է երեկ դեռ երազ համարուած ազգային վերականգնումի գաղափարական բերդը:

Բայց յուզումն եւ հոգեպարարն ետք հարկ է խօսիլ ազգային-քաղաքական պարտականութեան եւ պարտքի մասին: Վերանկախացած Հայաստանի Հանրապետութիւնը (100-ամեակ) եւ Ազատագրուած Արցախը (30-ամեակ) չեն կրնար ապրիլ միայն Փոթոմաքի ափի քաղաքական տեսակցութիւններով, Պեվըրիի Հիլզի նախանձ շարժող հայերու բարեսիրական հայրենասիրութեամբ, ոչ Էյֆելի շուրջ ճաշկերոյթներու եւ երգահանդեսներու ընթացքին ձեռք բերուած հայասիրական յայտարարութիւններով, ոչ ալ ամառնային թուրիստական իրարանցումներով:

Կը յիշեմ մեր յառաջացած տարիքի ուսուցիչը, 1918-էն առաջ քիմիագիտական դոկտոր Գեղամ Երամեանը, որ իր վկայականը շակած գացած էր Հայաստան, հասկցած ըլլալով, որ հոն էր իր տեղը եւ հոն օգտակար պիտի ըլլար ինք: Օրինակելի:

Հայաստան չէր գացած որպէս հետաքրքիր եւ լուսանկարուելու խենթ զբօսաշրջիկ:

Հայաստանի եւ Արցախի նկատմամբ ազգային-քաղաքական պարտականութիւն եւ պարտք ունի հայը, Գեղամ Երամեանի օրինակով, որ հայրենատիրութեան միւս եւ ոսկոր տուող հայրենադարձութիւնն է: Ինչո՞ւ հայկական կազմակերպութիւնները եւ քաղաքական ղեկավարութիւնները չեն կազմակերպեր հայրենատիրական եւ հայրենադարձութեան քաղաքականութիւնը, որուն գնահատումը կ'ըլլայ թիւ-թուանշանով: Համաժողովներու մասնակցողները օր մը պիտի ըսեն, թէ քանի հազար անձերու բնակութիւնը ապահովեցին Արցախ եւ Հայաստան, միշտ գիտնալով՝ որ երկիր մը հայրենիք է իր ժողովուրդով:

Ամեակներու հռետորական հանդիսութիւններու ընթացքին առարկայական տուեալներով պէտք է ըսել, առանց ոտքի քնացնող ճապկումներու, թէ ի՞նչ կ'ընենք վաղուան համար: Նախագահ Սերժ Սարգսեան խոստացած է Հայաստանի բնակչութեան թիւը հասցնել չորս միլիոնի, պէտք է ըսէ՝ ոչ միայն Երեւանի: Սփիռքի հայկական կազմակերպութիւնները, իրենց կարգին, պիտի ըսեն, թէ յառաջիկայ տարի, տարիներուն, քանի հազար հայերու Հայաստան եւ Արցախ վերադարձը պիտի իրականացնեն, անոնք ըլլան աշխատաւորներ, վկայեալներ, ձեռներէցներ, դրամատերեր եւ արուեստագետներ:

Այս վերադարձն է Հայաստաններու վերականգնումի եւ վերամիացման անկեղծիք եւ ճշմարիտ ուղին: Ազգային ղեկավարումը շորորալու երգ ու պարէն պէտք է ազատել եւ ոտքի կանգնեցնել յաջորդ հազարամեակներու տեսիլքով:

Միջազգային Արդարադատութեան Ատեանը համաժողովային դեր ունի եւ ըստ այնմ պէտք է վերաբերիլ:

Հայրենատիրութիւնը օտարներու որբահաւաքով եւ դեղի ու սնունդի մատակարարումով չ'իրականանար:

Ազգային ղեկավարումը հայ գիրերու Մեսրոպեան յեղափոխութենէն ետք ազգին պէտք է ընծայէ ուրիշներէ չակնկալուած մեր նոր օրերու եւ վաղուան հեռանկարային յեղափոխութիւնը, որ Նոր Չելանտա նստողները Արարատի գագաթին տնկուած մոմի լոյսով չի ջերմացներ:

Լաւ պիտի ըլլայ ամեակները հրավառութեան չվերածել:

Տեսիլք ունենալ եւ գայն գործի վերածել:

Եթէ յաջողեցանք պատմութեան ծուռ անիւը շրջել Արցախ Հայաստանի մէջ, ոչ մէկ պատճառ կայ, որ ան իր ճիշդ հունը չգտնէ Արեւմտահայաստան հայաշխարհի մէջ:

Հայրենիք

Հայկական քոչարին՝ ԵՌԻՆԵՍՔՕ-ի ոչ նիւթական ժառանգութեան ցանկին մէջ



Հայկական քոչարին ընդգրկուած է ԵՌԻՆԵՍՔՕ-ի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ: Այս մասին կը յայտնէ կազմակերպութեան Twitter-ի պաշտօնական էջը:

Քոչարի պարը հայկական ոչ նիւթական մշակութային ժառանգութեան բնութագրական դրսեւորումներէն է եւ տարածուած է Հայաստանի Հանրապետութեան ողջ տարածքին ու հայկական սփիւռքի մէջ:

ԵՌԻՆԵՍՔՕ-ի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութեան հարցերով միջկառավարական յանձնաժողովի ամենամայ նստաշրջանը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 4-9:

Թուրքիոյ մէջ գտնուող հայկական դպրոցները կը պայքարին իրենց գործունէութիւնը շարունակելու համար. «Հուրիէթ»



Թուրքիոյ մէջ 1920-ական թուականներուն գործող, ազգային փոքրամասնութիւններուն պատկանող 138 դպրոցէն այսօր մնացած են միայն 24-ը: Թրքական «Հուրիէթ» պարբերականը անդրադարձած է երկրին մէջ գործող ազգային փոքրամասնութիւններուն պատկանող դպրոցներու վիճակին եւ արձանագրած, որ անոնցմէ շատերը այսօր փակման վտանգի առջեւ են:

Ըստ պարբերականին՝ դպրոցներէն շատերը, որոնք կը գոյատեւեն միայն նուիրատուութիւններու հաշուին, եթէ այլ ֆինանսաւորում չունենան եւ «շահ չհետապնդող կազմակերպութեան» կարգավիճակ չստանան, ապա կը փակուին:

Յօդուածին մէջ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչները ներկայացուցած են այս ոլորտին մէջ իրենց առջեւ կանգնած դժուարութիւնները:

Հայկական Դադեան դպրոցի նախկին հիմնադիր խորհուրդի անդամ Արսէն Արշըք ներկայացնելով Թուրքիոյ մէջ գործող հայկական դպրոցներու վիճակը՝ ըսած է.

«Այսօր Թուրքիոյ մէջ կայ մօտ 60 հազար հայ: Եթէ 1950-ական թուականներու վերջերը մենք ունէինք 25 դպրոց եւ 9 հազար աշակերտ, ապա այսօր ունինք 16 դպրոց եւ 3 հազար աշակերտ: Երկրին մէջ կրթութեան ոլորտին մէջ կատարուած փոփոխութիւնները բացասականօրէն ազդած են նաեւ մեր դպրոցներուն վրայ: Զանի որ աւագ դպրոցներ ու համալսարաններ ընդունուելու համար քննութիւնները տեղի կ'ունենան կեդրոնացուած համակարգով, ծնողները կը ցանկան, որ նոյնիսկ բնագի-

Գերմանիոյ Քէօլն քաղաքին մէջ Հայոց Յեղասպանութեան գոհերու յիշատակին խաչքարի զետեղում



Գերմանիոյ Քէօլն քաղաքին մէջ, Նոյեմբեր 18-ին, տեղւոյն հայ համայնքին նախաձեռնութեամբ, զետեղուած է խաչքար մը՝ ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան գոհերուն: Խաչքարը օծուած է ձեռամբ Գերմանիոյ Հայ առաքելական եկեղեցւոյ առաջնորդական փոխանորդ Սերուբէ վրդ. Իսախանեանի: Խաչքարը բարձրացուած է Ս. Փեթրերգայուրկէն հայ բարերար Հրաչեայ Պօղոսեանի միջոցներով: Այս մասին կը հաղորդէ Ֆրանսայի «Նոր Յառաջ»-ը:

Խաչքարի զետեղումը մեծ զայրոյթ պատճառած է քաղաքի թուրք համայնքին, որուն ներկայացուցիչը՝ Լեւենթ Թաշքըրան, թուրք մամուլին յայտնած է, որ տեղւոյն 32 թրքական միութիւններէն բաղկացած յատուկ նախաձեռնութիւնը՝ օրին այս նիւթով հանդիպումներ ունեցած է Քէօլնի քաղաքապետարանին հետ եւ հետեւած իրադարձութիւններու զարգացման: Բայց եւ այնպէս, հակառակ թրքական համայնքին ջանքերուն՝ յուշարձանը բարձրացուած է:

«Քէօլնի մէջ, ուր 100 հազարէ անէլի թուրք կ'ապրի, այդպիսի յուշարձանի բարձրացումը ներքին խաղաղութիւնը խաթարող քայլ կ'որակենք: Մենք քաղաքապետարանին այս որոշումը չենք ընդունիր եւ զայն կը համարենք հակաժողովրդական», - ըսած է ան:

Կապ Հրատարակութեան հետ:

hyegyank@gmail.com

տութեան եւ ուսողութեան ու նման առարկաները եւս դասաւանդուին թրքերէնով, թէեւ մենք իրաւունք ունինք ատոնք ուսուցանելու հայերէնով»:

Արսէն Արշըք անելուցած է, որ դպրոցներու միակ ֆինանսաւորումը նուիրատուութիւններն են, որոնք հազիւհազ կը փակեն ծախսերը:

ԱՄՆ 28-ՐԴ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՈՒԻԼՍՈՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ԻՐԱԴԱՐԱՐ ՎՃԻՌԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՍԲ

ՏԻԳՐԱՆ ՓԱՇԱՐԵԶԵԱՆ

Արեւմտեան Հայաստանի

Հանրապետության վարչապետ

2017 թ. Նոյեմբերի 22-ին լրանում է ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Ուիլսոնի կայացրած իրաւարար վճիռի 97-րդ ամեակը, որի ամբողջական անուանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի ծով ելքի եւ հայկական սահմանին յարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերեալ»:

Հայկական պահանջների ու իրաւունքների խնդիրները ներկայացուցել, քննարկուել եւ դրանց վերաբերեալ որոշումներ ընդունուել են 1920 թ.-ին՝ Փարիզի Խաղաղութեան վեհաժողովում, որոնք տեղ են գտել Նաեւ Սեւրի Խաղաղութեան պայմանագրում եւ ԱՄՆ Նախագահ Վուդրո Ուիլսոնի կայացրած իրաւարար վճիռում:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ պատերազմում յաղթած պետութիւնները՝ Խաղաղութեան պայմանագիր մշակելու եւ կնքելու նպատակով հրաւիրեցին Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը, որն ընդհատուեալ տեղի ունեցաւ 1919 թ. Յունուարի 18-ից մինչեւ 1920 թ. Յունուարի 21-ը: Վեհաժողովին մասնակցում էին Մեծ Բրիթանիայի, Ֆրանսայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ճաբոնի, Պելճիգայի, Պրագիիայի, Յունաստանի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Սերպերի, Խորվաթների եւ Սլովենների թագաւորութեան, Ռումանիայի, Հնչագի եւ այլ երկիրների ներկայացուցիչներ: Խաղաղութեան հիմնական պայմանները ձեւակերպում էին Ֆրանսայի վարչապետ Զլեմանսոն, Մեծ Բրիթանիայի վարչապետ Լլոյդ Ճորճը եւ ԱՄՆ Նախագահ Ուիլսոնը:

1919 թուականի Փետրուարին Փարիզում գտնուող հայկական երկու պատուիրակութիւնները՝ Ազգային պատուիրակութիւնը Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ եւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը Աւետիս Ահարոնեանի, Ներկայացան դաշնակիցներին՝ խնդրելով ճանաչել հայերի ազգային պահանջները: Ֆրանսայի արտաքին գործերի նախարար Ս.Բիշոնը հայ պատուիրակներին առաջարկեց յուշագիր պատրաստել: 1919 թուականի Փետրուարի 12-ին ներկայացուեց «Հայկական պահանջների յուշագիր» հետեւեալ բովանդակութեամբ: Հայկական անկախ պետութեան ճանաչում՝ հայկական 7 նահանգների, Կիլիկիայի եւ Կովկասի Հայկական Հանրապետութեան հողամասերի միացումով:

1920 թուականի Յունուարի 19-ին վեհաժողով հրաւիրուեցին հայկական երկու պատուիրակութիւնների ղեկավարները՝ Պօղոս Նուպարը եւ Աւետիս Ահարոնեանը, որտեղ նրանց տեղեկացրին, որ Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը «տե ֆակ-

տո» ճանաչում է հայկական պետութեան անկախութիւնը: Անկախութեան ճանաչումը ձեւակերպուած էր այսպէս.

1) Դաշնակիցների Գերագոյն Խորհուրդը յայտարարութեամբ տեղեկացնում է, որ ճանաչում է Հայկական պետութեան կառավարութիւնը, որպէս փաստացի կառավարութիւն,

2) Որոշումաւ է, որ ճանաչումը չի կանխորոշում Հայկական պետութեան սահմանների հարցը:

Սեւրի Խաղաղութեան պայմանագրի 88-րդ եւ 89-րդ յօդուածներում նշուած է.

«Յօդուած 88. Թուրքիան յայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպէս այդ բանն արդէն արել են Դաշնակից տերութիւնները, որպէս ազատ եւ անկախ պետութիւն»:

«Յօդուած 89. Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս եւ Բարձր պայմանաւորուող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատուումը թողնել Ամերիկայի Միացեալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպէս նրա որոշումը, նոյնպէս եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ յիշեալ սահմանագծին յարող օսմանեան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերեալ»:

1920 թ. Նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Ուիլսոնը ստորագրել է «Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահի որոշումը Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանի... վերաբերեալ» Իրաւարար վճիռը եւ այն կնքել ԱՄՆ-ի մեծ կնիքով:

Ալետիս Եափոլճեանի ազգային-հասարակական խանդավառ գործունէութիւնը սկիզբ կ'առնէ 1950-ին, երբ կը միանայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերուն Գահիրէի մէջ, կնքահայրութեամբ նշանաւոր երգահան եւ խմբավար, ինչպէս նաեւ հիմնադիր անդամ Թէքէեան Մշակութային Միութեան՝ Համբարձում Պերպերեանի:

Եափոլճեան Գահիրէի մէջ Հայ Գեղարուեստասի-

րաց Միութեան պատանեկան շարժումին հիմնադիրը կը դառնայ եւ կը մասնակցի միութեան «Երիտասարդական փառատօն»-ներուն: Յետագային իր աշխոյժ մասնակցութիւնը պիտի շարունակէր Հայ Գեղարուեստասիրաց Միութեան համար, դառնալով վարչութեան ատենադպիրը: Այս շրջանին Եափոլճեան իր թարգմանական մասնակցութիւնը կը բերէ «Արեւ» օրաթերթին, քաջալերանքովը խմբագրապետ՝ Դոկտ. Նուպար Պերպերեանի: Կանուխ տարիքէն ան կը դառնայ Նուիրեալ մը սփիւռքահայ մամուլին, մասնակցութիւնը բերելով Պէյրութի «Չարթօնք» օրաթերթին, ինչպէս նաեւ Պոսթոնի «Պայքար»-ին: Ալետի ուշ իր աշխատակցութիւնը կը բերէ նաեւ Բալիֆորնիոյ «Նոր Օր» եռօրեային, Պէյրութի «Նայիրի» շաբաթաթերթին, Գահիրէի «Կեանք եւ Գիր» եւ Պէյրութի «Շիրակ» ամսագրերուն:

Եափոլճեան 1959-ին կեանքի ընկեր կ'ընտրէ մանկավարժ-ուսուցչուհի՝ Անժէլ Միրզայեանը, ու կը բախտաւորուին երկու զաւակներով. որդին՝ Արեգ եւ դուստրը՝ Մարօ, որոնք Եափոլճեաններուն պարգեւած են 5 թոռներ:

1965-ին կը դառնայ օգնական խմբագիրը «Արեւ» օրաթերթին երկու տարուան համար, իսկ 1967-ին ձեռնհասօրէն կը ստանձնէ պատասխանատու խմբագրի պաշտօնը Նոյն թերթին, որ պիտի վարէր յաջորդ 23 տարիներուն ընթացքին:

Եափոլճեանի պատմաբանական հեղինակութիւնը կը դառնան՝

1. «Հայ ժողովուրդին մեծ գոյամարտը եւ Հայաստանի Հանրապետութիւնը ստրկացողները» (Գահիրե, 1968),
2. «Ո՛վ կազմակերպեց փետրուարեան արկածախրընդրութիւնը եւ ի՞նչ եղաւ անոր հետեւանքը» (Գահիրե, 1969),
3. «Յուշամատեն Համբարձում Գարայեանի» (Գահիրե, 1970),
4. «Արեւմտահայաստանի կորուստը եւ անոր պատասխանատուները» (Գահիրե, 1970),
5. «Եւ վերածնաւ հայ ժողովուրդը հուրէն եւ սուրէն»- (Գահիրե, 1971),
6. «Հայաստանի Հանրապետութեան քաղաքական, գիւղորական, տնտեսական, ընկերային կացութիւնը» (Գահիրե, 1972):

1974 թուականին երեք տարուան դասընթացները մէկ տարիէն աւարտելով, ներկայացուցած է իր աւարտաճառը Երեւանի պետական համալսարանի գիտական խորհուրդին, արժանանալով պատմական գիտութիւններու Դոկտորայի աստիճան:

Պատմաբան-հրապարակագիր Դոկտ. ԱԼԵՍԻԱ ԵԱՓՈԼՃԵԱՆ (1931 Գահիրե – 2017 Սիտնի)

Ճարտունակություն էջ 23-ԷՆ

Դարասկզբի ազատագրական շարժման հետ կապուած երկու այլ աշխատասիրութիւններ եւս կատարած է դոկտորական աստիճանը ստանալէն առաջ.

1. «Պաքուի հերոսամարտը եւ անոր պատմութեան պատասխանատուները» (Գահիրե, 1973), եւ՝
2. «1918թ. Թրքական արշաւանքը Հայաստան եւ Պաթումի պայմանագիրը» (Երեւան, 1974):

Հրատարակչական նուիրեալ կոչումին առընթեր ան կը դառնայ ատենադպիրը ՌԱԿ Եգիպտոսի Շրջանային վարչութեան, ինչպէս նաեւ կը վարէ Հայ ազգային հիմնադրամի վարիչ քարտուղարի պաշտօնը Գահիրէի մէջ:

Աւելի ուշ 1977ին կը հեղինակէ երկու այլ ուսումնասիրութիւններ.

1. «Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան» (Գահիրե, 1977), եւ՝
2. «Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921» (Գահիրե, 1977):

Յաջորդ քառասուն տարիներուն երախտաւորին գրիչէն լոյս կը տեսնեն 25 հեղինակութիւններ, պատմական ուսումնասիրութիւններու կողքին նաեւ տպաւորութիւններ եւ յուշեր, ինչպէս նաեւ Յուշամատեն Հայ Գեղարուեստասիրաց Միութեան, Պատմութիւն հայ ազգային հիմնադրամի եւ Պատմութիւն Կոկանեան սրահի:

1981-ին Գահիրէի մէջ իր ծննդեան 50րդ տարեդարձին կողքին նաեւ կը նշուի գրական-հասարակական գործունեութեան 35ամեակը:

Հակառակ անոր, որ գրական իր ասպարէզը սկսած է երգիծաբանութեամբ, սակայն յետագային, տարուած է հրապարակագրութեամբ, ուր թէեւ միշտ ներկայ եղած է երգիծաբանը:

Եափուճեան նաեւ ֆրանսերէնի եւ անգլերէնի թարգմանած է հայերէնի 25 հատորներ:

1990 Դեկտեմբերին վերջնականապէս կը հաստատուի Աւստրալիոյ Սիտնի քաղաքը, ուր բնակութիւն հաստատած էր իր որդին՝ Արեգը:

Յաջորդ եօթը տարիներուն հասարակական իր մասնակցութիւնը կը բերէ Բարեգործականի Սիտնիի մասնաճիւղէն ներս ու կը դառնայ ՀԲԸՄ-ի վարիչ քարտուղարը: Ժամանակէ մը իվեր ՌԱԿ-ի Աւստրալիոյ շրջանակը, Սիտնիի եւ Մելպուրնի մէջ գործող տեղական ակումբներուն շնորհիւ կարելոր մասնակցութիւն կը բերէր գաղութահայ կեանքէն ներս. երախտաւոր Եափուճեան կը դառնայ պատուոյ ատենապետը Սիտնիի ՌԱԿ Արտակ Դարբինեան ակումբին, ու կը վայելէ յարգանքը յարաբերաբար երիտասարդ սերունդին իր նուիրեալ

տարիներու վաստակով:

Եափուճեանին անունը ներառուած է համաշխարհային երեւելի երեք հանրագիտարաններու մէջ՝ «Men of Achievement», Volume 10, 1985, Cambridge, England, «The International Register of Profiles», 8th edition, 1985, Cambridge, England, նաեւ «Հայկական Սովետական Հանրագիտարան», 8-րդ հատոր, իսկ յունական մեծ հանրագիտարանը ամբողջ էջ մը յատկացուցած է իրեն:

1995-ին Սիտնիի մէջ կը նշուի այս անգամ անոր գրական-հասարակական գործունեութեան յիսնամեակը:

1998-ին կը ստանձնէ խմբագրութիւնը Բարեգործականի «Միութիւն» ամսագրին:

2001-ին Աւստրալիոյ կառավարութիւնը գնահատելով անոր կամաւոր աշխատանքը աւստրալահայ համայնքէն ներս, զինք կը պարգեւատրէ յատուկ շքանշանով:

2005-ին իր գրական 60-ամեակին առիթով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. իր սրբատառ կոնդակով զինք կը պարգեւատրէ՝ «Սբ. Սահակ-Սբ. Մեսրոպ» շքանշանով:

Ութսուն տարեկան յառաջացած տարիքին, երախտաւորը կը շարունակէ իր գրական աշխատանքը ու կը ձեռնարկէ «Մատենաշար Արեգ» շարքին, որուն հրատարակութիւնը կը դառնան հետեւեալ գրքոյկները Սիտնի հրատարակուելով.

1. «Յուշեր Բեգլար Նաւասարդեանէն» (2012)
2. «Դիմադարձութեան առեղծուածը» (2012)
3. «Կեանքէս ճակատագրական երեք հանգրուաններ» (2012)
4. «Ռոպէր Հատտեճեանի կոթողային շարքը» (2013)
5. «Բանաստեղծ Միհրան Սարգիսեան» (2013)
6. «Ալիսիա Կիրակոսեան երեւոյթը» (2013)
7. «Գալուստ Գալոյեանի Հայաստանը եւ մեծ տէրութիւնները» (2013)
8. «Հայկական հարցին ծագումը» (2014)
9. «Նանսէն եւ իր «Հայաստանի մէջ»» հատորը (2015)

2011-ին Սփիւռքի նախարար Հրանդ Յակոբեան պատուոյ գիրով եւ «Ռիլիմ Սարոյեան»-ի անուն մետալով պարգեւատրեց զինք:

Վաստակաշատ այս հրապարակագիրը եւ յարատեւ ուսումնասիրող պատմագետը, յաւիտեան իր աչքերը փակեց Սիտնիի մէջ 2017ի գարնան, յետ կարճատեւ հիւանդութեան, 86 տարեկան հասակին:

Որպէս ՌԱԿի երախտաւոր իր անունը անբաժան պիտի մնայ սփիւռքահայ հրապարակագրութեան էջերէն:

ԱՐԵՒՏԱՅԱՅԵՐԷՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԵՐՐՈՊԱՅԻ ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ (*)

ԿԱՐԱՊԵՏ ՏԱՔԵՍԵԱՆ

Խօսքս ենթակայական է եւ ընդհանրացնելու յաւակ-
նութիւն չունիմ: Նախ շատ արագ պիտի ներկայաց-
նեմ հայկական աշխարհի ներկայ վիճակը, անշուշտ
գիտակից եմ, թէ ո՛չ կատարեալ պատկեր մը պիտի
ըլլայ ան: Եւ յետոյ պիտի անդրադառնամ սփիւռքի
մէջ հայ անհատի ինքնութեան կերտման խնդրին եւ
ի վերջոյ, այս ստեղծուած համագործին մէջ՝ պիտի
փորձեմ տեղադրել արեւմտահայերէնի անհրաժեշ-
տութեան հարցը:

Նախ երկու ընդգծումներ՝ առաջինը Հայաստանի
Հանրապետութեան նախագահին երկու տարի
առաջ հեռատեսիլէն կատարած յայտարարութիւնն
է, ըստ որուն՝ «Սփիւռք-Հայաստան յարաբերութիւն-
ները ռազմավարական նշանակութիւն ունին»: Ռազմավարական կը նշանակէ տեւողականութիւն
ունեցող երեւոյթի մը յառաջացուցած խնդիրներուն՝
համագործակցաբար, ներդաշնակօրէն եւ միասնա-
բար լուծում գտնել: Հոս կը յառաջանայ հետեւեալ
հարցումը. արդեօք սփիւռքը պատրա՞ստ է այս
ռազմավարական համագործակցութեան: Կամ
արդեօք սփիւռքը պիտի մտածե՞ ինքնանորոգման
միջոցներ փնտռելու ուղղութեամբ:

Երկրորդ ընդգծումը Արամ Ա. Վեհափառ Հայրապե-
տին, Յուլիս ամսուան ընթացքին Անթիպասի մէջ
ունեցած ելոյթին կը վերաբերի, որ ի՞մ համոզումով
պատմական նշանակութիւն ունի, որովհետեւ մենք
իր անողոք դիտարկումով սփիւռքի կիզիչ իրակա-
նութեան դէմ յանդիման կու գանք: Այլա՞նք Գամիւ
կ'ըսե՞ «Եթէ վիճակին անունը չտաք ողբերգութիւն-
ները ձեզի կը հետեւին»: Մեր մէջ այս պարագան,
այսինքն՝ վիճակին անուն չտալու երեւոյթը, յաճախ
կը պատահի:

Ուրեմն Հայաստանի Հանրապետութեան նախա-
գահը սփիւռքէն կ'ուզէ, կը ցանկայ ռազմավարա-
կան մակարդակի համագործակցութիւն, իսկ միւս
կողմէ Արամ Ա. Վեհափառի արտայայտութեան մէջ
մենք կը տեսնենք սփիւռքի իրական վիճակը: Այս
երկու արտայայտութիւնները, սփիւռքի մէջ, մեր
ապագայի աշխատանքի դաշտին տարածքը կը
ճշդեն: Սփիւռքի մէջ, այսօր Հայութեան ընդհանուր
թիւը –ինչպէս այս համագումարին նշուեցաւ– եօթը
միլիոն է: Անկէ 30 տարի առաջ չորս հայէն մէկը
Հայաստանէն դուրս կ'ապրէր, իսկ ներկայիս հինգ
հայէն չորսը դուրսն է: Այս կացութիւնը մեր պատմու-
թեան մէջ աննախընթաց երեւոյթ է եւ եթէ այսպէս
շարունակուի յիսուն տարի վերջ մեր թիւը կը նուա-
զի մէկ միլիոնի: Այս տուեալը կու գայ Եւրոպայի
գարգացած երկիրներու վիճակագրական հիմնարկ-
ներէն:

Այս երկիրները տարիներու ընթացքին հարիւր
հազարաւոր գաղթականներ կ'ընդունին եւ բնակա-
նաբար իրենց միջոցներով կը հետեւին, թէ այդ

տարագիրները որքա՞ն ժամանակ ետք կը ստանձ-
նեն նոր ինքնութիւն: Յիսուն տարի վերջ անոնցմէ
միայն տասը առ հարիւրը իրենց լեզուով կը խօսի:

Հայութեան պարագան եւս տարբեր պիտի չըլլայ եւ
յիսուն տարի վերջ մենք ալ պիտի կորսնցնենք մեր
ինքնութիւնը: Արդեօք պիտի ձգե՞նք որ եօթը միլիոն
հայեր այս ճակատագրին ենթարկուին...:

Համեմատութիւնը զարհուրելի է: Կարելի է ըսել որ
Հայաստանի անկախութիւնը, Սփիւռք-Հայաստան
կապերը, բնականաբար այս համեմատութիւնը
կրնան թեթեւցնել, բայց ճակատագիրը չէ՛ն փոխեր:
Մենք մեր ներկայ կառոյցներով եւ ներկայ մտածո-
ղութեամբ, առաւելագոյնը պիտի մնանք երկու
միլիոն, որովհետեւ սփիւռքը չ'արտադրեր, իսկ
չարտադրող ամէն մէկ հաւաքականութիւն միայն եւ
միայն մահուան կը դատապարտուի: Ահաւասիկ
ա՛յս է իրականութիւնը: Ես դիտաւորեալ կերպով
«պահպանել» բառը չեմ ուզեր գործածել, որովհետեւ
«պահպանել» կը նշանակէ մեռնիլ, իսկ «կերտել» եւ
«ստեղծել»-ն է, որ հաւաքականութիւնը կենսունակ
կը պահեն:

Ժամանակին թերեւս «հայապահպանում» արտա-
յայտութիւնը նշանակութիւն մը ունէր, բայց այսօր
ան իմաստ չունի: Հետեւաբար ես պիտի գործածեմ
«հայեցի ինքնութեան կերտումը» կամ «հայաստեղ-
ծումը» բառակապակցութիւնները:

Վեհափառ Տիրոջ ներկայացուցած խօսքին մէջ ես
գտայ 37 բառեր, որոնք սփիւռքի ներկայ վիճակը կը
բնութագրեն, կը նկարագրեն եւ երբեմն ալ կացու-
թեան լուծում կ'առաջարկեն: Ուրեմն 37 բառով
նկարագրուած հաւաքական կեանք մը չի կրնար
գոյութիւն ունենալ եւ կամ մենք չենք կրնար լուծում
գտնել...: Այս բարդ եւ խրթին վիճակը պետք է յստա-
կացնել մտածողութեան ա՛յն ուղղութեամբ, որուն
հիմնադրոյթը մեր միտքը կը շարժէ եւ մեր վիճակին
մասին ստեղծագործ գաղափարներու կ'առաջնորդէ:

Ասիկա անհատի ինքնութեան կերտման աշխա-
տանքն է: Հետեւաբար սփիւռքահայ իւրաքանչիւր
անհատի կերտման խնդիրը մե՛ր խնդիրն է, որով-
հետեւ մենք երկու անհատականութիւն չենք կրնար
ունենալ եւ ինչպէս կ'ըսէ Շահան Շահնուր՝ «մարդը
մէկ է»: Մենք ունինք մէկ անհատականութիւն, մէկ
ինքնութիւն եւ այդ ինքնութեան կերտումին մէջ կը
տեսնենք նաեւ հայ աշխարհի, հայ իրականութեան
տարրերը, զորս անհատը իւրացնելով կը ստեղծէ իր
իսկ ինքնութիւնը: Պարզ խօսքով ինքնութիւնը գու-
մարում չէ, ինքնութիւնը զգայնութիւն մըն է, որ
իմաստ կու տայ հայութեան: Գըրգ Գրիգորեանի
օրինակը ծանօթ է բոլորին. ան միայն տասը բառ
հայերէն գիտեր եւ 240 միլիոն տոլար նուիրեց
Հայաստանին, որովհետեւ իր մայրը իրեն ըսած էր՝
«Երբ Հայաստան անկախանայ պիտի նուիրես հայ-

ԱՐԵՒՏԱՅԱՅԵՐԷՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԵՐՐՈՊԱՅԻ ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ (*)

Շարունակություն էջ 25-Էն

րենիքիդ»։ Հետեւաբար ինչպէ՛ս կարելի է տասը բառ գիտնալով այդքան յանձնառու ըլլալ։ Իսկ միւս կողմէ, դարձեալ ինչպէ՛ս կարելի է մէկը որ հեղեղահոս հայերէնով կ'արտայայտուի, կը մտնէ խորհրդարան եւ 8 հոգի կը սպաննէ...:

Ուրեմն մենք ինչպէ՛ս պիտի բացատրենք եւ սահմանենք հայու ինքնութեան իմաստը։ Սփիւռք-Հայաստան վերջին համաժողովին մարդիկ եղան որոնք ըսին թէ քանի մը բաղադրիչներ ունենալով հայ կը դառնանք։ Այսպիսի իրականութիւն գոյութիւն չունի։ Ատիկա գոյութիւն ունէր այն ժամանակ երբ Լիբանանի կամ Սուրիոյ մէջ հողային տարածքի մը ընկալումը կար, այսինքն անհատը, երախան հաւաքական կեանքի մը պատկերացումը ունէին։ Աւելի՛ն, անհատի զարգացման համար կառոյցները գիրար կ'ամբողջացնէին՝ նոյնիսկ միջկուսակցական ոչ ցանկալի յարաբերութիւններու մէջ, որովհետեւ անհատը ինքզինք կը պատկերացներ այն հաւաքականութեան մէջ ուր ինք կ'ապրէր։ Բայց այսօր Ֆրանսա, Ամերիկա կամ այլուր ո՛ր է այդ վայրը, ինչպէ՛ս մենք պիտի ներկայացնենք մեր աշակերտներուն, որ հայկական իրականութիւնը այդ վայրին մէջ կը կերտուի։ Ասիկա մարդաբանական հարց է, որովհետեւ ինքնութեան կերտման խնդիրը եւ հաւաքական կեանքի ստեղծումը իրարու հետ փոխկապակցութիւն ունին, այսինքն անհատը անհատ չի կրնար ըլլալ եթէ հաւաքականութիւնը չկայ։ Այս երկուքը (անհատ եւ հաւաքականութիւն) առերեւոյթ իրարու հակադրուող, բայց իրար ամբողջացնող անանցելի այն երկու տարրերն են, որոնք մէջ կը ստեղծուի նաեւ մշակոյթը։ Այս է սփիւռքի մէջ հայ դպրոցի անանցելիութեան հիմքը։

Հայաստանի մէջ, վերջին համագումարին թուայնացման հնարաւորութիւնները ներկայացան որպէս հրաշք լուծում առաջադրող։ Շփոթ կար նպատակի եւ միջոցի միջեւ։ Երբ երախան համակարգիչին առջեւ կը կոխէ ստեղծաշարին, այդ պահուն իր մտքին մէջ հարցումը արդէն ձեւաւորուած է։ Հետեւաբար մտքի ձեւաւորման հարցը դպրոցի հարց է, իսկ համակարգիչը՝ միջոց։ Ուրեմն մենք չենք կրնար դպրոցը բացառել, որովհետեւ այդ պարագային ինչպէ՛ս պիտի ձեւաւորենք միտքը, որպէսզի այդ միտքը ինք ստեղծէ հարցումը եւ գործիքը օգտագործէ նպատակայարմար։ Հոս էականը ինքնութեան կերտումն է։ Ստեղծարար գոյատեւման երաշխիքը։ Ինչ կը վերաբերի հայոց լեզուի պարագային. լեզուն «Էթնոկրաֆի»-ն է, լեզուն մեզի ցոյց կու տայ թէ մեր սիրտը լաւ կ'աշխատի՝ թէ՛ ոչ։ Լեզուն օգտագործող հաւաքականութիւնը կ'ունենայ կենսունակութիւն։ Իսկ ինքնութեան կերտման խնդիրները ուղղակի լեզուի հետ կապ չունին, որովհետեւ եթէ սիրտը չկայ «Էթնոկրաֆի»-ն ինչի՞ պիտի ծառայէ...։ Բայց ասիկա չի նշանակեր որ լեզուն անկարելորդ է, որովհետեւ

լեզուի հանդէպ մեր մերձեցումը ընդհանրապէս քերականութիւն է, ուղղագրութիւն է, բայց ես երբեք չեմ նկատած, որ ուրիշ լեզուներու մէջ քերականութիւնը նոյնանայ լեզուին հետ։ Լեզուն մշակոյթ կը փոխանցէ։ Այս երկա՛ր ներածականը ըրի հասնելու համար արեւմտահայերէնի հարցին։

Արեւմտահայերէնի պատմութիւնը Արեւմտահայութեան պատմութիւնն է, իսկ արեւմտահայերէնը այդ պատմութեան դրսեւորումը։ 1699-ին Օսմանեան կայսրութիւնը առաջին անգամ պատերազմ կորսնցուց, սկսաւ նահանջել եւ չկարողացաւ զաւթումը շարունակել ու պարտադրաբար, զգաց որ եւրոպական քաղաքակրթութենէն պէտք է բաներ մը առնէ, որպէսզի բանակը ուժեղանայ եւ շարունակէ իր նուաճումները։ Այդ միջոցին Անգլիոյ եւ Ռուսաստանի միջեւ գոյութիւն ունեցող լարումին հետեւանքով Օսմանեան կայսրութիւնը սկսաւ զիջիլ։ 1838-ին՝ Թանգիմարով՝ հայերը, օտարները, այլազգիները կրցան շունչ մը առնել եւ մենք այդ պահուն յեղափոխութիւն կատարեցինք եւ մեր ուղեղի դռները բացինք լուսաւորութեան շարժման առջեւ։ Երբ այս էր իրադրութիւնը Պոլսոյ մէջ՝ Վանէն, Կարսէն եկած բեռնակիրներ, որոնք իրենց հացը վաճառելու համար կ'աշխատէին, իրենց առօրեայ յոգնատանջ աշխատանքէն ետք սկսան հայերէն սորվիլ միայն երազի մը համար՝ որ վաղը պիտի ապրէին նո՛ր Հայաստանի մէջ։ Հետեւաբար մենք մտանք յոյսի ճամբան եւ ստեղծեցինք Սահմանադրութիւն, որ մեր մշակութային կեանքի ամենէն կարելորդ երեւոյթներէն մէկն էր։

Այդ Սահմանադրութիւնը ստեղծեցինք, հոն ուր խաւարամտութիւն կար։ Եւ մենք որպէս հայ առաջին անգամ կապ հաստատեցինք այն յեղափոխականներուն հետ, որոնք ունէին այն գաղափարը, թէ մարդը մտածելու համար ո՛չ թէ խնամակալի պէտք ունի, այլ ան կրնայ ինքնուրոյն մտածել իր իմացական կարողութիւններով։ Եւ մենք ստեղծեցինք դպրոցներ։ Համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ շատ հազուադէպ է որ առանց պետութիւն ունենալու կարելի ըլլայ 1700 դպրոց կառուցանել։

Յետագային մենք տեսանք այդ մտածողական շարժման կատարելիութիւնը։ Հոս երկու անուն պիտի յիշեմ միայն. Ռ. Պերպերեանը երբ իր դպրոցին կը տնօրինէր, իրեն զանգատ կու գայ ըսելով թէ՛ «այս ի՛նչ տեսակ դպրոց է, ուրկէ շրջանաւարտ աշակերտները պազարին մէջ ո՛չ ֆրանսերէնով նամակ գրել գիտեն եւ ո՛չ ալ հաշուապահութիւն»։ Ռ. Պերպերեան կը պատասխանէ. «Ես երախան պէտք է բազմակողմանի զարգացնեմ, այսինքն՝ նախ պէտք է անոնց բազմակողմանի ընդունակութիւնները յայտնաբերեմ, որպէսզի կարողանամ իմ ուսուցչական առաքելութիւնս իրականացնել, քանի որ երախան յետոյ շատ արագ կը սորվի ձեր ուզած»։

Շարունակություն էջ 28

Ի՞նչ տեսք կ'ունենան հայկական նոր թղթադրամները



Հայաստանի Կերրոնական դրամատունը ներկայացուցած է շրջանառության մեջ ներդրուելիք երրորդ սերունդի թղթադրամներու նախագիծերը, կը հա-

ղորդէ «armradio»-ն:

Նոր թղթադրամները շրջանառության մեջ պիտի դրուին 2018 թուականին:

Նոր 1000-դրամանոցը նուիրուած է Պարոյր Սեւակին: 2000-դրամանոցը՝ ճատրակի պիտեան Տիգրան Պետրոսեանին: 5000-դրամանոցը՝ Ուիլիըմ Սարոյեանին, 10.000-դրամանոցը՝ Կոմիտասին, 20.000-դրամանոցը՝ Յովհաննէս Ալվազովսքիին, 50.000-դրամանոցը՝ Գրիգոր Լուսաւորիչին:

100.000-դրամանոցներ այլեւս պիտի չթողարկուին:

Ներկայացուած է նաեւ 500 դրամ անուանական արժէքով 2017-ի թողարկման «Նոյեան տապան» հաւաքորդական թղթադրամի նախագիծը:

ԱՐՅԱԽ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՆՇԵԼՈՒ ԴԱՐԱԲԱՂԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄԵԱԿԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, «Նիուգ».- Արցախի նախագահ Բակո Սահակեան Հինգշաբթի, 16 Նոյեմբերին ստորագրեց հրամանագիր մը. «Արցախահայութեան ազգային-ազատագրական պայքարի՝ դարաբաղեան շարժման 30-րդ տարեդարձի տօնակատարութեան կազմակերպման եւ համակարգման պետական յանձնաժողով ստեղծելու եւ դրա անհատական կազմը հաստատելու մասին: Յանձնաժողովի նախագահն է Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկեանը»:



ՎԱՏԻԿԱՆԸ ՅԱՏՈՒԿ ՆԱՄԱԿԱՆԻԾ ԹՈՂԱՐԿԱԾ Է ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՆԿԱՐՈՎ՝ ԹԻԿՈՒՆՔԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԸ



Կաթոլիկ աշխարհի հոգևոր առաջնորդ Հռոմի Ֆրանչիսկոս պապի 2016 թուականի այցերուն նուիրուած՝ լոյս տեսած են յատուկ փոստային նամակաւիշեր:

Ըստ Armenpress.am-ի՝ նամակաւիշերու շարքին յատուկ տեղ ունի Հայաստան կատարած պատմական այցին վերաբերեալ թողարկուած նմուշը: Նամակաւիշին վրայ պատկերուած է Ֆրանչիսկոս պապը, իսկ անոր թիկունքին Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան յուշահամալիրը:

Վատիկանի պաշտօնական կայքը նշած է, որ նամակաւիշին հեղինակը Դանիէլա Լոնկոն է, որ պատկերած է Ծիծեռնակաբերդի մէջ Հռոմի պապի աղօթքի պահը:

Հռոմի Սրբազան Բահանայապետ Ֆրանչիսկոս Պապ 2016 Յունիս 25-ին այցելած էր Ծիծեռնակաբերդ՝ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած յուշահամալիր, ուր յարգանքի տուրք մատուցած էր Հայոց Յեղասպանութեան նահատակներու յիշատակին: Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի պատուոյ այցելուներու գիրքին մէջ՝ Սրբազան Բահանայապետը գրած էր. «Այստեղ կ'աղօթեմ՝ ցաւը սրտիս մէջ, որպէսզի այլեւս երբեք նման ողբերգութիւններ, չկրկնուին, որպէսզի մարդկութիւնը չմոռնայ եւ գիտնայ չարութեան բարութեամբ յաղթել: Թող Աստուած պարգեւէ սիրեցեալ հայ ժողովուրդին եւ ամբողջ աշխարհին խաղաղութիւն եւ միաբարութիւն: Աստուած պահպանէ հայ ժողովուրդի յիշողութիւնը: Յիշողութիւնը կարելի չէ ո'չ պոտորել, ո'չ մոռնալ: Յիշողութիւնը խաղաղութեան եւ ապագայի աղբիւրն է»:

Յիշեցնենք, որ Ֆրանչիսկոս Պապը Հայաստան ժամանած էր Յունիս 24-26՝ «Այց առաջին քրիստոնէական երկիր» խորագիրով:

ԱՐԵՒՏԱԶԱՅԵՐԷՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԵՐՐՈՊԱՅԻ ՄԷՋ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ (*)

Ճարուհակութիւն Էջ 26-ԷՆ

ները»: Մեր երկրորդ մեծ մշակը՝ Յովհաննէս Հինդլեան, 1901-ին ուսուցիչներուն ուղղուած իր դասախօսութիւններէն մէկուն կ'ըսէ հետեւեալը. «Մանկավարժական մեթոտաբանութիւնները սորվեցէ՛ք, քերականութիւնն ալ սորվեցէ՛ք, բայց որպէս ուսուցիչ երբ որ գործի պիտի անցնիք՝ նախ երախտն ճանչցէ՛ք»: Ասիկա յեղափոխութիւն մըն էր, որովհետեւ անհատի ճանաչումէն մեկնելով է որ պէտք է միջոցներ փնտռել եւ ո'չ թէ հակառակը: 120-130 տարի առաջ արտայայտուած եւ մանաւանդ՝ կիրարկուած գաղափարներ, որոնք այսօր եւս ունին արդիական հնչեղութիւն: 19-րդ դարու սկիզբէն մինչեւ Հայոց Յեղասպանութիւն, կեանքի գրեթէ բոլոր ոլորտներուն մէջ դիտարկուած փոխակերպման աննախընթաց հեւքին մէջ զարգացաւ արեւմտահայերէնը: Լեզուի մը զարգացման միակ պայմանն է հասարակական կեանքին ժամանակակից դառնալով, ստեղծագործելու եւ արտադրելու ուժականութիւնը:

Կարելի չէ լեզուէն ակնկալել այն, ինչ որ ան մեզի չի կրնար տալ: Սփիւռքի մէջ լեզուն մեր անկազմակերպութիւնը քօղարկելու պէտք չէ որ ծառայէ: Այսօր մեր երախտները զանազան մակարդակներ

ունին եւ ուսուցիչներն ալ պէտք է ունենան բազմակողմանի զարգացում: Անոնք պէտք է գիտակցին մեր առջեւ ցցուած մարտահրաւերներուն: Բայց նաեւ հայերէնի ուսուցիչը պէտք է ըստ արժանւոյն վարձատրուի: Մենք վերջին 50 տարուան ընթացքին նիւթական արժէքը երկու միլիառ տոլարի հասնող դպրոցներ փակեցինք:

Կ'աւարտեմ: Մեր առջեւ գտնուող մարտահրաւերները աննախընթաց են: Նորովի մտածելու դատապարտուած ենք: Նոյնիսկ կրնանք ըսել թէ նոր մշակոյթ մը պէտք է ստեղծենք, որպէսզի Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները կարողանանք բարձրացնել «ռազմավարական» մակարդակի:

(*) **Խօսուած՝ Եւրոպահայութեան 4-րդ համագումարին (Պրիւքսել, 18-19 Հոկտեմբեր) «Նոր Յառաջ», 18 Նոյեմբեր, 2017**



ՐԱԿ ՄԱՄՈՒԼ

Այցել՝

Կարդա՝

Տարած՝

www.RagMamoul.net

ԿՈՉ՝ ՉԱՓ ՈՒ ՄԱՀՄԱՆԸ ԳԻՏՆԱԼՈՒ

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Այդ ե՞րբ եւ ինչպե՞ս գոյացաւ մեր ժողովուրդին մէջ հիասթափութեան հոգեբանութիւնը: Մենք՝ որ պատմութեան ամենաթեժ պայմաններուն մէջ յաջողեցանք վերընծիւղուիլ դժոխային պայմաններէ, մենք՝ որ չէինք ծնկաչոքած ամենահզօր արիաւիրքներուն դիմաց, ինչպե՞ս եղաւ, որ այսօր մատնուած ենք պարտութեան հոգեբանութեան: Չենք կարողաւար թօթափել մեր վրայ ինկած այդ թանձր յուսալքութեան փոշին:

Յատկապէս զարթօնքի շրջանին ձեւաւորուած գիտակցութիւնը պէտք էր օգնէր մեզ, որպէսզի ազգովին յաջողէինք միասնական կամք դրսեւորելու եւ այդ կամքին պահանջածը գիտակցաբար կիրարկելու: Ցաւօք կը տեսնենք, որ բաւական հեռու ենք այդ կարողութենէն: Հարիւր տարուան մեր պատրաստութիւնը կարծես յանկարծակի կերպով ցնդած ըլլար այս նոր մարտահրաւերներուն դիմաց: Եղածը Նոյնիսկ ամօթալի է: Ամօթալի է այնպէս, ինչպէս որ արեւմտեան կողմն աշխարհէն մարդիկ կը յանդգնին մեր գոյութիւնը իսկ հարցական տեսնելով:

Այս սիւնակին մէջ անցեալին ալ բազմիցս գրեցինք, որ եղածը Պոլսոյ հայութեան հաշուին հետզհետէ արժանապատուութեան խնդիր մըն է: Նախորդ շաբթու մէջ Յարութ Սասունեանի յօդուածը ճիշդ ալ այս իրողութիւնն է, որ օրակարգի կը բերէ: Այդտեղ կը խօսուէր այս աթոռի անցեալին գահակալներուն ձեւով մը պետութեան երաշխիքներ փոխանակելով այդ աթոռին բարձրանալու վարկածին մասին:

Բոլորս գիտենք, թէ Պոլսոյ պատրիարքական աթոռի գահակալներուն ուղղուած նման ցեխարծակումը միայն մէկ նպատակ ունի՝ մրոտել Պոլսոյ հայուն արժանիքը: Այս հաստատումը ինքնաբերաբար տեղի կու տայ հարցումի մը՝ ինչո՞ւ: Այս կամ, այն սփիւռքահայը ինչո՞ւ կարիքը զգայ ներկայ պոլսահայութիւնը մրոտելու: Կարծեմ այս հարցումին պատասխանը աւելի լաւ գիտեն բոլոր այն պոլսահայերը, որոնք անցեալին այս կամ այն ձեւով մատնուած են իբրեւ թէ ազգայնական շրջանակներու արհամարհանքներուն: Նման զրպարտութեան ետին պիտի ըլլայ միայն մէկ գործօն, որն է սեփական հողին վրայ գոյութիւնը շարունակելու իրողութիւնը: Մենք իրաւ ալ կրնանք հասկնալ այն բարդոյթը, որ կը ծագի հայրենի երկիրը լքելէն: Դասալիք եղողը ստիպուած է ինքզինք արդարացնել այն համոզումով, թէ իր լքած երկրին մէջ այլեւս հնարաւոր չէր իբրեւ հայ գոյատեւել եւ լոկ այդ պատճառաւ է, որ հեռացած է հայրենի երկրէն: Բայց երբ իբրեւ փաստացի իրողութիւն պիտի տեսնէ այդ Նոյն երկրին մէջ ծառացած բոլոր դժուարութիւնները յաղթահարելով գոյատեւող մարդիկ ակամայ պիտի տարուին ցեխարծակումի առթած արդարացումին:

Մենք առաջին անգամ չէ որ կը հանդիպինք նման երեւոյթի: Նոյնիսկ ժամանակի ընթացքին սկսած ենք որոշ հանդուրժողականութիւն ալ ցուցաբերել այս սխալ մերձեցումին դիմաց, բայց հետզհետէ խնդիրը

կը վերածուի ամբողջ հասարակութիւն մը զրպարտելու եւ այդ պահուն այլեւս չենք կրնար պահել մեր հանդուրժողականութիւնը, Նոյնիսկ իրաւունք չենք գտներ այդ հանդուրժողականութիւնը ցուցաբերելու:

Ճիշդ է որ դժուար օրերէ կ'անցնինք, սակայն այդ չի նշանակեր, որ ցանկացողը իր ուզած եղանակով հալածէ ամբողջ համայնք մը: Ո՛չ, այդքանը աւելի է, մեզ՝ հանդուրժողութեան այսքան փորձ կուտակածներուս համար անգամ: Մենք այս անելն ալ կը կոխկռտենք եւ կը շարունակենք մեր երթը դէպի պայծառ ապագայ:

Պատմութեան էջերը կը գրուին մեր կեանքի տեւողութենէն շատ աւելի երկար ժամանակահատուածի մէջ: Ուրեմն իրաւունք չունինք միայն պահը դիտելով այսքան ծանր հետեւութիւններ քաղելու: Կու գայ օրը, կու գայ պահը, երբ ամէն ինչ ալ աւելի յստակ կը դառնայ եւ կը տեսնենք, որ այս օրերու սա խառնաշփոթ ալեկոծումները դոյզն իսկ նշանակութիւն չեն ունենար անցնող հսկայ ուղիին մէջ:

ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ԵՈՒՆԻՒՍԵՖ-Ի ԴԵՍՊԱՆ ԵՄ. ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆ



Անգլիական «Մանչեսթըր Եունայթըդ»-ի ֆուլթայրիստները մասնակցած են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի բարեգործական երեկոյին:

«Հպարտ եմ, որ ԵՈՒՆԻՒՍԵՖ-ի դեսպան եմ», - ֆէյսպուքեան իր էջին վրայ գրած է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեան:

ՄԷԼ տարի է, որ Հենրիխ Մխիթարեան միացած է ԵՈՒՆԻՒՍԵՖ-ի խումբին որպէս բարի կամքի դեսպան:

«Օլտ Թրաֆորտ»-ի մէջ կայացած բարեգործական երեկոյի ընթացքին հաւաքուած է 160 հազար ֆունթ սթեռլինկ: Այն պիտի տրամադրուի ԵՈՒՆԻՒՍԵՖ-ին՝ Թայլանտի մէջ հերթական առաքելութեան իրականացման համար, կը գրէ armradio.am-ը :

National Geographic. Քարահունջը ընդգրկուած է աշխարհի հնագոյն աստղադիտարաններու ցուցակին մէջ



National Geographic աշխարհագրական գիտահանրամատչելի ամսագիրը Քարահունջ մեծաքարային համալիրը, որ նաեւ կ'անուանեն «Հայկական Սթոունհենջ», ընդգրկած է աշխարհի հնագոյն աստղադիտարաններու ցուցակին մէջ: «Սիրիուսը եւ Օրիոնը կը փայլին խորհրդաւոր Քարահունջի լուսաւորուած քարերու վերեւը: Այն բաղկացած է հարիւրաւոր ուղղահայեաց քարերէ», - գրած է պարբերականը:

Քարահունջը կամ Չօրաց Քարերը կը գտնուին Սիսիան քաղաքէն ոչ հեռու՝ Որոտան գետի Դարբ վտակի ձորի ձախ ափին եւ բաղկացած են մինչեւ 10

թոն քաշ ունեցող ուղղահայեաց քարերէ, որոնք միասին կը կազմեն ընդհանուր կոթող: Համալիրի՝ 25 հեկտար մակերեսին վրայ, որոշակի համակարգով դասաւորուած են եռանկիւնաձեւ քանի մը հսկայական քարեր, որոնց մէջ աստղադիտակի համար նախատեսուած յատուկ անցքեր բացուած են:

Ըստ որոշ հնագետներու, Քարահունջը կը թուագործի մեր թուարկութենէն առաջ երրորդ հազարամեակով, սակայն ոմանք ալ կը կարծեն, որ համալիրը աւելի հին է եւ հիմնուած է հինգերորդ հազարամեակին: Այդ խորհրդաւոր քարէ շինութեան վերաբերեալ ակադեմիկոս Փարիս Հերունին նախորդ դարու 90-ականներուն զգայացունց վարկած առաջ քաշած էր՝ անուանելով համալիրը այն ժամանակ յայտնաբերուած ամենահին աստղադիտարանը բոլոր յայտնաբերուածներուն մէջ:

National Geographic-ի գլխաւոր տեղին մէջ յայտնուած են նաեւ Մեքսիքոյի Չաքօ Բանետը, փորթուկալական Զրոմլէիը, յունական Մետեորաները, քէնիական Սիպիօ ազգային պարկը, իրանական Ալամուտ ամրոցը, աստորալական Ուլուրու Բատա Տիւտա ազգային պարկը, Զալիֆոնիոյ Օուէնս հովիտը, կը գրէ Ankakh.com-ը:

Մարսէլի ARAM Ընկերակցութիւնը կը հաւաքէ եւ կը թուայնացնէ Ֆրանսայի հայ համայնքի պատմութիւնը



Մարսէլի հայկական յուշերու հետազօտման եւ արխիւացման ընկերակցութիւնը՝ ARAM-ը (l'Association pour la Recherche et l'Archivage de la Memoire Armenienne), կը հաւաքէ եւ կը թուայնացնէ Ֆրանսայի հայ համայնքի մասին պատմող փաստաթուղթերը, լուսանկարները, նամակներն ու ծայնասկառանկները:

«Կարելոր է որեւէ փաստաթուղթ, ըլլայ ատիկա աշխատանքի պայմանագիր, ձեռնարկի ազդարարագիր, թէ պարահանդէսի տոմս՝ ատիկա արխիւի շատ հետաքրքիր մաս է: Մենք ունինք 30-ականներու լուսանկարներ: Մեզի գիրքեր կը բերեն, որոնք յաճախ անընթեռնելի են: Մենք շնորհակալ ենք



վստահութեան համար, քանի որ մարդիկ գիտեն, որ այստեղ ատոնք կը թուայնացուին եւ կը տարածուին», - պատմած է՝ ARAM-ի արխիւային կեդրոնի կառավարիչ եւ պատմութեան ու աշխարհագրութեան փորձէտոր Աստրիդ Արթին-Լուսիկեան, կը յայտնէ Rusarmino-ն La Marseillaise-ի վրայ յղումով:

Առաջին հայերը Ֆրանսայի մէջ հաստատուած են վաղ միջնադարի՝ 6-րդ դարուն: Անոնց թիւը աստիճանաբար աւելցած է յատկապէս Կիլիկիոյ հայկական պետութեան անկումէն (XIV դար) յետոյ, ապա՝ XV-XVI դարերուն, երբ հայկական փոքրաթիւ գաղութներ հիմնուեցան Մարսէլի, Փարիզի եւ քանի մը այլ քաղաքներու մէջ: Ֆրանսահայ համայնքը մասնաւորապէս ստուարացաւ, երբ Մեծ եղեռնէն փրկուած արեւմտահայ գաղթականներու հազարաւոր ընտանիքներ եւ որբեր հաստատուեցան Ֆրանսայի մէջ:

ԻՆՔՉԻՆՔԸ ՃԱՆՉՆԱԼ ՍԻՐԱԾ ԳՈՅՆԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ

1. **Ճերմակ:** Ասիկա բոլոր գոյներու համադրութիւնն է, անոր համար ալ կը համարուի իտեալական գոյն կամ «երազանքի գոյն»: Անոր մէջ կայ բազմանշանակ իմաստ, քանի որ միաժամանակ կ'արտացոլացնէ ե՛ւ լոյսի փայլը, ե՛ւ սառնոցի սառնութիւնը: Այս գոյնին նախապատուութիւն կրնայ տալ իւրաքանչիւր բնաւորութեան մարդ. անիկա ո՛չ մէկը կը վանէ:

2. **Սեւ:** Այս գոյնը կրնայ յառաջացնել անհանգիստ վիճակ եւ կը նոյնացուի ժխտական երեւոյթի հետ: Անիկա կը խորհրդանշէ կեանքի տխուր ընկալումը: Անոնք, որոնք կը նախընտրեն սեւ հագուիլ, յաճախ կ'ընդունին կեանքը մռայլ գոյներով, վստահ չեն իրենց վրայ, դժբախտ են եւ ընկճուած, քանի որ չեն կասկածիր, որ իտեալները կեանքի մէջ անհասանելի են: Սեւ հագուստի փոխարինումը այլ գոյնով մը՝ աւելի վառով, կ'ենթադրէ, որ վատատեսական տրամադրութիւնները տեղի տուած են:

3. **Մոխրագոյն:** Խելամիտ եւ չվստահող, որեւէ որոշում կայացնելէ առաջ երկար խորհրդածող մարդոց սիրած գոյնն է: Այս գոյնը կը նախընտրեն նաեւ անոնք, որոնք կը վախնան իրենց մասին շատ բարձր յայտարարելէ: Մարդիկ, որոնք համար այս գոյնը հաճելի չէ, ունին թեթեւամիտ բնաւորութիւն:

4. **Կարմիր-կրքերու գոյն:** Մարդը կ'առանձնանայ արիութեամբ, կամքի ուժով, իշխողականութեամբ, բռնկողականութեամբ, շփոռողականութեամբ, այլասիրութեան հակումով, եթէ ան կը սիրէ այս գոյնը: Այն մարդիկ, որոնք կրնայ ջղայնացնել այս գոյնը, զարգացած են թերաբժեքութեան բարդոյթով:

5. **Նարնջագոյն:** Չարգացած յայտնատեսութեամբ եւ կրքոտ երագողներու սիրած գոյնն է: Այս գոյնը կը մատնանշէ նաեւ երեսպաշտութիւնը եւ կեղծիքը:

6. **Շագանակագոյնը** եւ անոր բոլոր երանգները: Կը նախընտրեն անոնք, որոնք պինդ եւ հաստատուն կանգնած են ոտքերու վրայ: Մարդիկ, որոնք թուլութիւն ունին այս գոյնի նկատմամբ, կը գնահատեն աւանդոյթները եւ ընտանիքը: Գոյնի հաճելի չըլլալը կը խօսի եսասիրութեան եւ ծածկամտութեան մասին:

7. **Դեղին:** Կը խորհրդանշէ հանգստութիւն, անկաշկանդութիւն մարդոց հետ յարաբերութիւններու մէջ: Մարդիկ, որոնք կը սիրեն այս գոյնը, կ'առանձնանան շփոռողականութեամբ, հետաքրքրասիրութեամբ, արիութեամբ: Անոնք կը յարմարին ամէն ինչին, կը սիրեն հաճելի թուիլ եւ իրենց վրայ ուշադրութիւն յառաջացնել: Այս գոյնը հաճելի չէ ինքնամփոփ, յոռետես մարդոց, որոնք հետ դժուար է ծանօթութիւն հաստատել:

8. **Բաց կանաչ,** մարդատեսացներու եւ ցինիկներու գոյն: Այս գոյնը հաճելի կը թուի իշխող բնաւորութեամբ մարդոց, որոնք կը ձգտին իրենց կամքը թելադրել ուրիշներուն, բայց *նիսքի* չեն դիմեր՝ վախճալով իյնալ դժուար կացութեան մէջ:

9. **Վարդագոյն,** կեանքի եւ ամենայն շնչաւորի գոյնն է: Ասիկա կը խօսի սիրելի եւ բարի ըլլալու անհրաժեշտութեան մասին: Անոնք, որոնք համար հաճելի է այս գոյնը, հակուած են անհանգստանալ ամենաչնչին



առիթով:

10. **Մանիշակագոյն:** Կը խօսի շատ բարձր յուզականութեան, զգայունութեան, բարձր հոգեւոր հարստութեան եւ նրբանկատութեան մասին: Ասիկա ներդաշնակ զարգացած մարդոց գոյնն է: Այս գոյնը չեն տանիր պարտքի զգացումով մարդիկ եւ անոնք, որոնք կը փափաքին ապրիլ միայն ներկայով:

11. **Կապոյտ:** Քանի որ ասիկա երկինքի գոյնն է, ուստի յաճախ կը կապուի մարդու հոգեւոր վեհութեան եւ մաքրութեան հետ: Անոր նկատմամբ հակումը կը խօսի համեստութեան եւ մեղամաղձտութեան մասին: Այսպիսի մարդիկ պէտք է յաճախ հանգստանան, անոնք շատ արագ եւ դիւրին կը յոգնին, անոր համար ծայրայեղ կարեւոր է վստահութիւնը ինքն իր նկատմամբ եւ շրջապատի բարեացակամութիւնը: Անոնք, որոնք այս գոյնը չեն ընդունիր, կը փափաքին ցուցադրել, որ աշխարհի վրայ ամէն ինչ իրենց ենթակա է: Բայց ըստ էութեան, անոնք անվստահ եւ փակ մարդիկ են: Այս գոյնի նկատմամբ անտարբերութիւնը կը խօսի զգացմունքներու ոլորտին մէջ յայտնի թեթեւամտութեան մասին՝ թաքնուած քաղաքավարութեան դիմակի ետին:

12. **Կանաչ-բնութեան,** բնականի, կեանքի, գարնան գոյն: Ան, որ կը նախընտրէ այս գոյնը, կը վախնայ օտար ազդեցութենէ, կը փնտռէ ինքնահաստատման միջոց, քանի որ ատիկա անոր համար շատ կարեւոր է: Իսկ ան, որ չի սիրեր, կը վախնայ կենցաղային խնդիրներէն, ճակատագրի անակնկալներէն եւ ընդհանրապէս բոլոր դժուարութիւններէն:

yerepouni-news



ՀՀ Սփիւռքի Նախարարութեան գործունէութիւնը լուսաբանող լրագրողներու հաւատարմագրում

«Չանգուածային լրատուութեան մասին» ՀՀ օրէնքի, ինչպէս նաեւ ՀՀ կառավարութեան 2004թ. Մարտ 3-ի N 333-Ն որոշմամբ հաստատուած «ՀՀ պետական կառավարման մարմիններուն մէջ լրագրողներու հաւատարմագրման օրինակելի կարգի» պահանջներուն համապատասխան, **ՀՀ սփիւռքի - Նախարարութեան աշխատակազմի մամուլի եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնը 2017թ. Դեկտեմբեր 5-էն Դեկտեմբեր 29-ը կ'իրականացնէ ՀՀ սփիւռքի Նախարարութեան գործունէութիւնը լուսաբանող լրագրողներու հաւատարմագրում:**

Հաւատարմագրուելու համար անհրաժեշտ է ներկայացնել գրաւոր դիմում, ուր պետք է նշուած ըլլան՝ ա/ լրատուական միջոցի անուանումը, գտնուելու վայրը

բ/ հաւատարմագրման ներկայացուող լրագրողի անուն ազգանունը

գ/ լրագրողի եւ անոր ներկայացուցած լրատուամիջոցի էլեկտրոնային հասցէները, հեռախօսահամարներն ու 3x4 չափի մէկ լուսանկար:

Օտարերկրեայ պետութեան օրէնսդրութեան հիման վրայ գործող լրատուական գործունէութիւն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հաւատարմագրման համար դիմումին կից պետք է ներկայացուի նաեւ ՀՀ-ի մէջ լրագրողի հաւատարմագրման՝ ՀՀ արտաքին գործոց Նախարարութեան կողմէ տրուած վկայականի լուսապատճեն, իսկ բնօրինակը կը ներկայացնէ լրագրողը:

Հաւատարմագրումը կ'իրականացուի մէկ տարի ժամկետով, իսկ լրատուական գործունէութիւն իրա-



կանացնողի դիմումին մէջ անելի պակաս ժամկետ մատնանշելու պարագային՝ տուեալ ժամկետով:

Հաւատարմագրման ենթակայ են իւրաքանչիւր լրատուամիջոց ներկայացնող ոչ անելի, քան 2 լրագրող եւ 2 լուսանկարիչ կամ՝ տեսաձայնագրման 2 համակարգող:

Ուշացումով՝ ս.թ. Դեկտեմբեր 29-էն ետք ներկայացուելիք դիմումներուն ընթացք չի տրուիր:

**ՀՀ սփիւռքի Նախարարութեան
մամուլի եւ հասարակայնութեան հետ
կապերու վարչութիւն**

Հայ պատանին կենցաղը հեշտացնող մարդ-մեքենայ ստեղծած է



11-ամեայ Դաւիթ Պաղտասարեանը մարդ-մեքենայի (robot) շինութեամբ կը հետաքրքրուի արդէն քանի մը տարիէ: Անոր ստեղծած դեռ միակ տարբեր աշխատանքներ կատարող մարդ-մեքենան կրնայ վերցնել, տեղափոխել եւ տեղադրել առարկաները, ինչպէս նաեւ կարող է հարցերու պատասխանել: Ան ունի նաեւ տեսախցիկ:

PanARMENIAN.Net-ին Դաւիթը պատմած է, որ մարդոց կենցաղը հեշտացնող մարդ-մեքենայ ստեղծելու մասին շատուցէ ի վեր կ'երազէր:

«Մարդ-մեքենայ ստեղծելու բազմաթիւ գաղափարներ յառաջացան «Ադուէս» ծրագիրը սորվելու ընթացքին, եւ ես որոշեցի որքան հնարաւոր է շատ բան իմանալ այս բնագաւառի մասին», - ըսած է ան:

Դաւիթը տարբեր աշխատանքներ կատարող մարդ-մեքենան պատրաստած է Նախապէս իր սարքած քանի մը այլ մարդ-մեքենաներու համադրութեամբ: «Երկու ամսուան մէջ պատրաստած եմ մարդ-մեքենան՝ Arduino IDE եւ Snap4arduino ծրագիրներու միջոցով», - ըսած է ան:

Պատանին մտադիր է կատարելագործուիլ մարդ-մեքենայի շինութեան բնագաւառին մէջ: Այժմ ան կը պատրաստուի բերք հաւաքող մեքենայ ստեղծելու: